

ԻՐԱՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒՆԵՐ

ARMENIAN
CHURCHES
IN IRAN

ՀՏԴ 27-9: 726.03
ԳՄԴ 86.37+85.113
Ա 791

Ավետյան Շ.

Ա 791 Իրանի հայկական եկեղեցիները / Շ. Աւետեան.-Եր.:
Հեղ. Հրատ., 2021, 296 էջ:

ՀՏԴ 27-9: 726.03
ԳՄԴ 86.37+85.113

ISBN 978-9939-0-3559-8
© Ավետյան Շ.

ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՃՈՒՆԵՐԸ
ՇԵՐԼԻ ԱՒԵՏԵԱՆ

ARMENIAN CHURCHES IN IRAN
SHERLY AVEDIAN



ԻՐԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

The Base of World Heritage Site of
Iranian Historical Churches



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
**RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE
FOUNDATION**

ԻՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԴԵՄԵՐԸ ARMENIAN DIOCESES OF IRAN



ՀԵՂԻՆԱԿԻ ԽՕՍԲ

Երախտագիտութեան խոր զգացումով գիրքս նւիրում եմ ամենաթանկագիններին՝ երջանկայիշատակ Ծնողներին: Նրանց անսահման սիրոյ եւ անմնացորդ նւիրումի շնորհիւ այսօր ես այն եմ, ինչ կամ: Նաեւ նրա համար, որ ինձ կեանք պարգեւեցին մի երկրում, որն անկիւնադարձային եղաւ մասնագիտութեանս (ճարտարապետութիւն) ընտրութեան ուղիում: Հրապուրած Իրանի պատմական հարուստ անցեալով, յուշարձաններով, կոթողներով ու բնութեամբ՝ առաջնորդեցի ուսումնասիրելու նաեւ մեր ազգի անցեալն Իրանի տարածքում եւ հազարամեակներով գոյութիւն ունեցող հայկական կառոյցները, որոնք մեծ մասամբ գտնուում են երբեմնի Պատմական Հայաստանի հողերի վրայ:

Իրանը, ծննդավայրս լինելով, ներշնչանքիս աղբիւրն է եղել եւ աշխատանքովս խաբսխել ինձ այս հողին:

Ծառաւած աշխատանքիս ճանապարհին հանդիպել եմ շատ մասնագէտների եւ փորձի փոխանակում կատարել, կիսել ենք գիտելիքներով, որոնցից պարտք եմ համարում առանձնացել եւ յիշատակել իմ լաւ ընկեր, անկրկնելի մասնագէտ, Մեծ Հայրենասէր Սամուէլ Կարապետեանին: Քսան տարիների մեր ծանօթութեան եւ աշխատանքի ընթացքի ամէն մի պահն ինձ համար եղել է անմոռանալի յուշ եւ ուսուցում: Նրա եւ նրա քիմակիցների օժանդակութեամբ այս գիրքը դարձաւ ամբողջական աշխատութիւն եւ իրանահայութեան պատմութեան մի մասնիկ:

Աշխատանքիս եւ մասնագիտութեանս բերումով եղել եմ տարբեր երկրներում եւ յաճախ հանդէս եկել դասախօսութիւններով: 2019 թ. Կանադայի Տորոնտօ քաղաքում ինձ ջերմօրէն հիւրընկալեցին տեղի Հայ Օգնութեան Միութեան «Ռուբինա» մասնաճիւղի հայուհիները, որտեղ հանդէս եկայ նաեւ դասախօսութեամբ: Մասնաճիւղն իր փոքրիկ ներդրումով սատարեց գրքիս տպագրութիւնը սկսելու համար, որը զնա հատանքի արժանի քայլ էր:

Իմ խորին շնորհակալութիւնն եմ յայտնում Իրանի Հայոց թեմերի հոգեւոր առաջնորդներին՝ մեզ պատրաստակամօրէն սատարելու համար:

Շնորհակալութիւն եմ յայտնում նաեւ այս գիրքը պատրաստելու ընթացքում ինձ աջակցած բոլոր այն անձանց, որոնց անվերապահ եւ աչալուրջ աշխատանքի շնորհիւ հնարատր եղաւ ի կատար ածել այս մնայուն, արժէքատր եւ խիստ անհրաժեշտ գործը:

ACKNOWLEDGE- MENTS

This book is dedicated to my parents of blessed memory, the dearest people in my life to whom I owe a debt of gratitude: their boundless love and devotion have guided me towards all my achievements. The country where I was born, Iran, has played a crucial role in my choice of profession (architecture), for which I am particularly grateful to my parents. Fascinated with the rich history of Iran, its nature and architectural heritage, I was gradually imbued with a strong desire to study the historical Armenian monuments located on the territory of this country, mostly in historical Armenian lands.

Iran, my birthplace, has been a source of inspiration for me, and thanks to my work, I feel a strong attachment to this country.

During my activities, I have exchanged experience and knowledge with a lot of experts, but I would like to particularly mention the late Samvel Karapetian, who was a prominent monumentologist, a great patriot and a close friend of mine: thanks to him, I learnt a lot during our twenty-year-long friendship and collaboration which bring back sweet memories. It was with the support of Samvel Karapetian and his teammates that this book was completed to present part of the history of Iranian Armenians.

Due to my profession and work, I have often travelled and delivered lectures in different countries. In 2019 I gave a talk in Toronto, Canada, where I enjoyed the cordial hospitality of Rubina Branch of the Armenian Relief Society. My special thanks are also due to the members of this branch for their contribution to the publication of this book.

I am deeply grateful to the Primates of the Armenian dioceses of Iran for kindly supporting us in our activities.

And, last but not least, I would like to express my gratitude to all the organizations and experts who have assisted me in the publication of this permanent, valuable and much-needed work.

ՆԱԽԱԲԱՆ

Համաշխարհային ժառանգությունը բնական եւ մարդու ձեռքով ստեղծւած արժէք է, որը պաշտպանում է էկոլոգիական եւ պատմական իւրայատուկ նշանակութեան համար: Նրա ձեռակերտ նիւթական եւ հոգեւոր բոլոր այն հանճարեղ ստեղծագործութիւնները, առանց ցեղային կամ կրօնական բաժանումների, պատկանում են ողջ մարդկութեանը եւ նրա պատմութեանը: Այդ պատմութեան մէջ իր իւրայատուկ տեղն ու դերն ունի Իրանը, որը համաշխարհային քաղաքակրթութեան օրրաններից է համարում: Իրանական կամ պարսկական մշակոյթը հազարաւոր տարիների աւանդոյթ ունի: Դեռեւս մ.թ.ա. առաջին հազարամեակում Իրանում զարգացած են եղել տարբեր արհեստներ եւ արւեստի բազում ճիւղեր, որոնցից այստեղ կարող ենք առանձնացնել քաղաքաշինութիւնն ու ճարտարապետութիւնը: Դրա վառ օրինակն է իրանական քաղաքաշինական եւ ճարտարապետական մշակոյթի գլոխգործոց համարող Աքեմենեան թագաւորութեան մայրաքաղաք Պերսեպոլիսը, որի աւերակները պահպանում են մինչ օրս: Ինչպէս Պերսեպոլիսը, այնպէս էլ Իրանի իսլամական, ինչու չէ՜ նաեւ քրիստոնէական եւ այլ մշակութային ու ճարտարապետական պատմական բոլոր կոթողները համամարդկային արժէքներ են եւ պատկանում են համաշխարհային մշակութային ժառանգութեանը:

Անկասկած, ճարտարապետութեան արւեստը կարելի է համարել մարդու ստեղծագործական մտքի ամենամեծ ձեռքբերումը: Դրա շնորհիւ առաջ է գալիս մարդու կողմից ստեղծւած իւրայատուկ նշանային համակարգ, որտեղ արւեստը, տեխնիկան եւ պատմութիւնը բնութեան ամեն մի մասնիկի ամբողջական արտայայտումն են: Այս բնագաւառում բաւականին մեծ ներդրում ունի նաեւ հայ ժողովուրդը թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Միջին Արեւելքում, մասնաւորապէս՝ Իրանում:

Այստեղ անդրադառնանք, որ հայ-իրանական պատմամշակութային յարաբերութիւնները հազարամեակների վաղեմութիւն ունեն: Իրանական մշակութային եւ քաղաքակրթական հսկայական ժառանգութեան անքակտելի մաս են կազմում նաեւ Հայկական բարձրավանդակի՝ իրանական հատւածում հայ ժողովրդի ձեռամբ կերտւած մշակութային արժէքները, արհեստներն ու արւեստների տարբեր ճիւղերը:

Հայերը՝ որպէս բնիկներ, ապրել են Իրանի հիւսիսային եւ հիւսիսարեւմտեան հատւածներում

PREFACE

World heritage includes both natural and man-made creations which are specially protected for their peculiar ecological and historical significance. The world's superb man-made creations, both material and spiritual, belong to entire humanity irrespective of the ethnic or religious identity of their creators.

Indeed, in the history of world cultural heritage, a special place and role are assigned to Iran, which is one of the cradles of world civilization. Persian or Iranian culture has a history of thousands of years. As early as the 1st millennium BC, Persia already boasted highly-developed arts, crafts and science, including urban planning and architecture: suffice it to mention the complex of Persepolis, the capital of the Achaemenid Empire and a masterpiece of the Iranian culture of architecture and urban planning, the ruins of which have come down to our days. This ancient capital and the other historical architectural monuments of Iran, both Islamic and Christian, are inseparable parts of world cultural heritage.

Undoubtedly, architecture can be considered as the greatest achievement of man's creative mind, combining arts, techniques and history in complete harmony with nature. Indeed, the Armenian nation has always had an invaluable contribution to the development of this sphere both in Historical Armenia and in the Middle East, especially in Iran.

Iranian cultural heritage, which is truly great and impressive, also includes monuments as well as works of arts and crafts created by Armenians in the Iranian part of the Armenian Highland. The historical and cultural inter-relations of the Armenians and Persians go back to the depth of millennia. Armenians, as natives, have lived in the northern and north-western parts of Iran (Urmia, Salmas, Khoy, Maku, Gharadagh, etc.). In 1605 several hundred thousand Armenians from the Ararat Plain and the neighbouring regions were deported to Persia by Shah Abbas I. They were settled in the central provinces of the country (Isfahan, Peria, Chaharmahal, Kazaz, Kamareh, Gaplan, etc.), later many of them moving to different cities and counties of Iran such as Tehran, Rasht, Anzali, Arak, Bushehr, Abadan, etc. After the deportation, many Armenians also took up residence

(Ուրմիա, Սալմաստ, Խոյ, Մակու, Ղարադաղ եւ այլն): 1605 թ. Պարսկաստանի Շահ Աբաս Առաջինն Արարատեան դաշտավայրից եւ հարակից գաւառներից մի քանի հարիւր հազար հայերի գաղթեցրեց Պարսկաստան՝ նրանց պարտադրելով բնակել երկրի կենտրոնական շրջաններում (Սպահան, Փերիա, Չարմահալ, Քազազ, Քյամարա, Գափլա եւ այլն): Աւելի ուշ նրանք ինքնական բնակութիւն են հաստատել նաեւ Իրանի տարբեր քաղաքներում եւ շրջաններում (Թեհրան, Ռաշտ, Էնզելի, Արաք, Բուշեհր, Արադան եւ այլն): Բռնագաղթի ենթարկւած հայերից շատերը Պարսկաստանի մայրաքաղաքի՝ Սպահանի հարաւային ծայրամասում կառուցեցին Նոր Ջուղա անունով մի բնակավայր: Շահի կարգադրութեամբ հայերին տրեցին յատուկ արտօնութիւններ, եւ քաղաքի ղեկավարումն ամբողջութեամբ յանձնեց նրանց: Այսպէս ձեւաւորեց Նոր Ջուղա հայկական քաղաքը: Հայերն իսկապէս մեծ ներդրում ունեցան պարսկական տէրութեան տնտեսական եւ մշակութային կեանքում:

1605 թականի՝ Շահ Աբասի կազմակերպած գաղթից յետոյ եւ ներկայումս բնակչութեան առումով հայերն Իրանի կարեւորագոյն համայնքներից են համարւում: Իրանահայ համայնքն քրիստոնէայ ազգային փոքրամասնութիւններից ամենախոշորն է: Հայերը հիմնականում բնակւում են Թեհրանում, Սպահանում, Թարիզում, Ուրմիայում, Շիրազում, Ռաշտում, Էնզելիում, Ղազւինում, Ահւազում, Աբադանում եւ այլուր:

Իրանահայ համայնքը բաժանւում է երեք թեմի.

1. Հիւսիսային կամ Ատրպատականի թեմ, կենտրոնը՝ Թարիզ.
2. Սպահանի կամ մախկինում Իրանահնդկաստանի թեմ, կենտրոնը՝ Սպահան.
3. Կենտրոնական կամ Թեհրանի թեմ, կենտրոնը՝ Թեհրան:

Նշեալ երեք թեմերն իրարից անկախ մարմիններ են: Նրանք պահպանում եւ տնօրինում են Իրանի հայկական բոլոր եկեղեցիներն ու կառոյցները եւ ենթարկւում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեանը:

Իրանի Իսլամական Հանրապետութիւնում գոյութիւն ունեն հայկական եւ քրիստոնէական մշակութային բազմաթիւ կոթողներ, որոնց իշխանութիւնները վերաբերւում են նոյն ուշադրութեամբ եւ գոյրգորանքով, ինչպէս սեփական (իսլամական կամ պարսկական) մշակութային ժառանգութեանը: Դրա ամենավառ ապացոյցներից այն է, որ ԻԻՀ կառավարութեան եւ Մշակութային ժառանգութեան, ձեռարկեստի եւ զբօսաշրջութեան մախարարութեան (մախկինում՝ Իրանի մշակութային ժառանգութեան կազմակերպութիւն) առաջարկով պատմական մի շարք վանքեր եւ յուշարձաններ

in a southern suburb of the Persian capital, Isfahan, where they founded the city of New Julfa (Nor Jugha in Armenian), being granted with special privileges by the shah (even the governance of the city was entirely entrusted to them). In the course of time, the Armenians made a truly great contribution to the development of economy and culture in the Persian Empire.

Today the Armenians represent the largest Christian national minority in Iran, forming one of the most important communities in the country. They mainly live in Tehran, Isfahan, Tabriz, Urmia, Shiraz, Rasht, Anzali, Ghazvin, Ahvaz, Abadan, etc.

The Armenian community of Iran is divided into three independent dioceses which are under the jurisdiction of the Armenian Catholicosate of the Great House of Cilicia:

1. the Northern or Atrpatakan (Iranian Azerbaijan) Diocese, with the seat of the Primate in Tabriz;
2. Isfahan (formerly: Iran and India) Diocese, with the seat of the Primate in Isfahan;
3. the Central or Tehran Diocese, with the seat of the Primate in Tehran.

All the Armenian churches of Iran as well as other Armenian buildings are under the care and charge of these dioceses.

The authorities of the Islamic Republic of Iran have not ever practised discrimination against the Christian cultural heritage of the country, including Armenian monuments. This is most eloquently proved by the fact that a number of historical monasteries have been included on the UNESCO List of World Heritage Sites thanks to the united efforts of the Iranian Government and the Ministry of Cultural Heritage, Handicrafts and Tourism (formerly: Iranian Cultural Heritage Organization).

In 2005 the Ministry mentioned above established the Base of Historical Churches of Iran for the study, conservation, overhaul, preservation, restoration and documentation of the historical churches and monasteries located in the country. Thanks to the efforts of this Base, soon after its foundation, the Armenian monasteries of Sourb Tadevos Arakyal or Sourb Tade (St. Thaddeus the Apostle) and Sourb Stepanos Nakhavka (St. Stephen the Proto-Martyr) as well as Sourb Astvatsatsin (St. Mary) Church of Tsortsor were listed as World Heritage sites.

To further promote its activities, in 2011 the Base entered into collaboration with Research on Armenian Architecture (RAA) Foundation based in Yerevan,

ԻԻՆՆՍԿՕ-ի կողմից գրանցել են որպես պատմամշակութային ժառանգության կառույցներ:

Վերոնշեալ նախարարութեան ենթակայ Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնին են յանձնարարած Իրանի տարածքում գտնուող եկեղեցիների պահպանման եւ վերականգնման աշխատանքները: Այն հիմնադրուել է 2005 թականին նոյն նախարարութեան կողմից, որի նպատակն է կատարել հետազոտական աշխատանքներ, պահպանել եւ վերականգնել Իրանի եկեղեցիները եւ յարակից համալիրները:

Առաջին քայլում Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնը ձեռնարկեց Սբ. Թադէոս Առաքելի (Սբ. Թադէ) եւ Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքերի, Ծործորի Սբ. Աստուածածին եկեղեցու գրանցումը ԻԻՆՆՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում:

Կենտրոնը ձեռնարկել է նաեւ Իրանի պատմական վանքերի, բոլոր եկեղեցիների հետազոտման, յուշարձանների պատմական միջավայրի պահպանութեան ապահովման, դրանց ամրակայման, նորոգման, վերականգնման եւ փաստաթղթատրման աշխատանքները: Այդ իսկ պատճառով 2011 թ. Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնը եւ Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամը ձեւաւորեցին հետազոտական համատեղ արշավախումբ: Տարբեր շրջաններում գտնուող հայկական գիւղերում եւ հայաբնակ քաղաքներում կատարած հետազոտութիւնների (2011-2019 թթ.) շնորհիւ պարզեց, որ Իրանում գոյութիւն են ունեցել աւելի քան 341 վանքեր, եկեղեցիներ եւ սրբավայրեր, որոնցից 123-ը դեռ կանգուն են:

Մինչ դաշտային աշխատանքներին անցնելն ուսումնասիրուեցին ազգային եւ պետական արխիւները, ԺԹ-Ի դարերի հայկական մամուլը եւ բազմաթիւ գրքեր: Ապա նիւթերի համադրմամբ ցանկագրեցին Իրանի՝ հայ բնակչութիւն ունեցած բոլոր գիւղերն ու քաղաքները, եւ ըստ այդմ՝ կազմեց ճամփորդական ուղեցոյց: Ինչ վերաբերում է դաշտային բուն աշխատանքներին, ապա արշավախումբը ցանկացած գիւղ մտնելիս, զրուցելով այժմեան մահմեդական բնակիչների հետ, նրանց օգնութեամբ գտնում էր գիւղի եկեղեցին, գերեզմանոցը, լուսանկարում եւ չափագրում: Բացի դրանից՝ լուսանկարում էին հայկական գերեզմանոցների արձանագիր եւ պատկերաքանդակներով հարուստ բոլոր տապանաքարերը:

Երկրորդ աշխարհամարտին Իրանում տեղի ունեցած երաշտի եւ հետագայ ներգաղթի ու արտագաղթի հետեւանքով մեծ թուով իրանահայեր ստիպւած լքում են իրենց գիւղերն ու բնակավայրերը: Այդ իսկ պատճառով լքած բնակավայրերի եկեղեցիները ժամանակի ընթացքում կա՛ն կիսաքանդ եւ դարձել, կա՛ն խոնարհուել, մի քանիսն էլ վերածել են իս-

Republic of Armenia. Our joint studies (2011 to 2019) of Armenian religious monuments carried out in different regions of Iran revealed that more than 341 Armenian churches, monasteries and sacred sites had once been built in Iran, and 123 of them were still preserved.

After studying the available materials (archive documents, Armenian press publications of the 19th to 20th centuries, published works, etc.) relating to our research, we made a list of Iranian villages and cities that had once been inhabited by Armenians and prepared a guide to fieldwork.

In almost every village, our work started with friendly talks with the present-day Muslim inhabitants who willingly helped us find the local church and cemetery. We took photos of churches, monasteries and Armenian cemeteries with all their inscribed and ornate tombstones; the religious monuments were also measured.

It should be noted that many Armenian churches were forsaken due to the large-scale emigration of Iranian Armenians following the severe drought that befell Iran during World War II. In the course of time, these churches were either half destroyed or completely reduced to ruins, some of them even turning into places of Muslim worship. Indeed, the type and quality of building materials played a great role in the destruction of many churches: in villages, simple churches built of raw brick were more prone to damage than monasteries and churches built of stone and other solid materials. Naturally, churches and monasteries built in cities have been preserved in better conditions and have remained standing until now.

At present the Government of Iran is taking steps to restore and further preserve the Armenian monuments of the country, including churches and monasteries. Several churches have already been restored with the participation of specialists (architects, stone-cutters and restorers of historical monuments) invited from the Republic of Armenia.

The Islamic Republic of Iran attaches great importance to its relations with its neighbours, including the Republic of Armenia. The two countries which share close historical and cultural ties boast good-neighbourly relations and extended collaboration in the sphere of cultural heritage preservation.

This book, which has been prepared thanks to the joint efforts of the Base of Historical Churches of Iran and Research on Armenian Architecture (RAA) Foundation, is one of the fruits of this collaboration. It presents all the Armenian churches and monasteries

լամական սրբավայրերի: Անկասկած, հայկական բնակավայրերի եկեղեցիների աւերման պատճառը մի կողմից տեղի բնակչութեան արտագաղթը, իսկ միւս կողմից, առաւել ազդեցիկ գործօնը, զիւղերում օգտագործւած շինանիւթերի որակն է եղել: Այնպէս որ զիւղերում աղիսով կառուցւած եկեղեցիները ժամանակի ընթացքում առաւել վնասւել են, քան քարով եւ ամուր շինանիւթերով կառուցւած եկեղեցիներն ու վանքերը: Բնականաբար քաղաքներում կառուցւածներն աւելի լաւ պայմաններում են պահպանւել եւ մինչ այժմ կանգուն են մնացել:

Ներկայ դրութեամբ Իրանի Իսլամական Հանրապետութեան կառավարութիւնը ջանքեր է գործադրում հնարաւորինս վերականգնելու եւ պահպանելու պատմական յուշակոթողները եւ կիսաքանդ եկեղեցիները: Այդ նպատակով Հայաստանից Իրան են հրաւիրւել ճարտարապետներ, քարտաշներ եւ պատմական կոթողների վերականգնման մասնագէտներ, որոնք իրանցի շինարարների ու ճարտարապետների օգնութեամբ հետազօտական աշխատանքներ են կատարել: Այս ամենի շնորհիւ եկեղեցիների վերականգնման աշխատանքները նոր թափ են ստացել:

Իրանի Իսլամական Հանրապետութիւնը մշտապէս մեծ կարեւորութիւն է տալիս հարեւանների հետ սերտ կապերին: Առկայ յարաբերութիւնների տիրոջութւն Հայաստանի Հանրապետութիւնն արժանի տեղ է զբաղեցնում, ինչի շնորհիւ երկու երկրների միջեւ մշակութային ժառանգութեան պահպանման ոլորտում համագործակցութեան բնականոն ընդլայնումն իրականանում է պատմական եւ մշակութային անցեալի եւ հզօր կապերի հիման վրայ:

Երկու բարեկամ երկրների համագործակցութեան արդիւնք է նաեւ այս գիրքը, որը կազմաւորւել է Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի եւ Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի համատեղ ջանքերով:

Գրքում մենք անդրադարձել ենք հայկական այն բոլոր վանքերին եւ եկեղեցիներին, որոնք դարերի ընթացքում կառուցւել են Իրանում: Դրանց որոշ մասը դեռ կանգուն է (մի մասը նոյնիսկ գործածւում է որպէս սրբավայր), միւսների միայն աւերակներն են պահպանւել, իսկ մնացածն այժմ գոյութիւն չունի:

Գիրքն աւարտում է Իրանի հայկական վանքերի եւ եկեղեցիների ամբողջական ցանկով, որոնց տւեալները կներկայացւեն Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի կայքէջում:

*Իրանի պատմական եկեղեցիների
կենտրոնի տնօրէն՝
Շերլի Աւետեան*

that were built in Iran in the course of centuries. Part of them are still preserved (there are even functioning ones); others have been reduced to ruins, while the rest have been destroyed without any vestiges left.

The book ends with a complete list of Armenian churches and monasteries in Iran: information relating to these monuments will also be available in the website of the Base of Historical Churches of Iran.

*Sherly Avedian,
Head of the Base of Historical Churches of Iran*

«ԻԿՕՄՕՍ/ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԽՕՍԱՔԸ «ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ» ԳԻՐՔ-ԱԼԲՈՄԻ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ



Հայ ժողովրդի կողմից ստեղծված մշակութային արժեքներն իրենց ուրոյն տեղն ունեն համաշխարհային ժառանգության ցանկում: Աշխարհի տարբեր երկրներում ապրած մեր հայրենակիցները ստեղծել են ճարտարապետական մեծարժեք գործեր, որոնք հարստացրել են տեղալ երկրների մշակույթը՝ բնականաբար կրելով նրանց ազդեցությունը, սակայն միարժեքորեն պահպանելով հայկական ազգային դիմագիծը: Մասնավորապես այն լուսագոյնս արտայայտված է Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում: Այդ երկրի տարբեր տարածաշրջաններում նրանց բարեացակամ վերաբերմունքի շնորհիվ պահպանված հայկական ճարտարապետական ժառանգությունը ենթարկում է տարբեր փոփոխությունների՝ պահպանելով շինությունների յօրինվածքը եւ հայկական կերպարը: Այս ամենի ուսումնասիրությունը եւ ամբողջականացումը մեկ աշխատության մեջ հայրենանուէր գործ է եւ մեծ դրուատանքի է արժանի: Նման նախաձեռնությունը խրախուսելի է ոչ միայն մեզ՝ հայերիս համար, այն հարստացնում է Իրանի եւ համաշխարհային ճարտարապետական ժառանգության պատմությունը՝ լայն հասարակութեանը ծանոթացնելով Իրանի տարածքում գտնուող հայկական ճարտարապետական արժեքներին:

Յուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային կազմակերպության Հայաստանի ազգային կոմիտեն՝ «ԻԿՕՄՕՍ/Հայաստանը», բարձր գնահատելով այս արժեքաւոր գիրք-ալբոմի հրատարակումը, ողջունում է նախաձեռնողներին եւ հեղինակին՝ ճարտարապետ Շերիլ Աւետեանին, որը նաեւ «ԻԿՕՄՕՍ/Հայաստանի» անդամ է:

Այս աշխատանքը մեծապէս կը հարստացնի հայկական ճարտարապետութեանը նւիրած գրականութեան շարքը եւ կօգնի առաջին հերթին հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրողներին, կը նպաստի հայկական մշակութային ժառանգութեան ճանաչելիութեան բարձրացմանը, որի համար մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում հեղինակին:

*Յուշարձանների եւ տեսարժան վայրերի
միջազգային խորհրդի Հայաստանի ազգային կոմիտէի
(«ԻԿՕՄՕՍ/Հայաստան») նախագահ՝
Գազիկ Գիւրջեան*

FOREWORD

BY

ICOMOS/ARMENIA



The cultural values created by the Armenian people have a unique place in world heritage.

Our compatriots living outside Armenia have created valuable architectural works which have enriched the culture of different countries. Being exposed to the interactions of different civilizations, these works have unambiguously retained the traditional features of Armenian architecture. This is particularly well seen on the territory of the Islamic Republic of Iran. Armenian architectural monuments built in different regions of this country are under care and protection: during their renovation and restoration, their Armenian originality is preserved thanks to the friendly attitude of the local authorities.

It is highly commendable to study the Armenian heritage of Iran and present it in one book. This work is also very important as it enriches the Iranian and, in general, world history of architectural heritage.

ICOMOS/Armenia, the Armenian National Committee of International Committee of Monuments and Sites, highly appreciates the publication of this book-album, welcoming the efforts of its author, Sherly Avedian, an architect and a member of ICOMOS/Armenia.

This work will greatly enrich literature on Armenian architecture, particularly promoting studies in this field and raising awareness of Armenian heritage, for which we are expressing our deepest gratitude to the author.

Gagik Gyurjyan,

President of ICOMOS/Armenia, the Armenian National Committee of International Committee of Monuments and Sites

ՅՈՒՆԵՍԿՕ-ՈՒՄ
ԳՐԱՅԻՆ
ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՑՈՒՇԱՐՁԱՆԵՐԷ

ARMENIAN
HISTORICAL
MONUMENTS
OF IRAN ON
UNESCO WORLD
HERITAGE LIST

ԻՒՆԵՍԿՕ-ՈՒՄ ԳՐԱՑԻԱԾ ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱԱԿԱՆ ՑՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ARMENIAN HISTORICAL MONUMENTS OF IRAN ON UNESCO WORLD HERITAGE LIST

1.	ՍԲ. ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՎԱՆՔ SOURB TADEVOS ARAKYAL MONASTERY (ST. THADDEUS THE APOSTLE MONASTERY).....	14
	N 39° 05' 32.30" E 44° 32' 40.40"	
2.	ՍԲ. ՆԱՀԱՏԱԿ ՄԱՏՈՒՌ SOURB NAHATAK CHAPEL (HOLY MARTYR CHAPEL)	27
	N 39° 05' 43.51" E 44° 32' 29.17"	
3.	ՍԲ. ԱՍՏԻԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌ SOURB ASTVATSATSIN CHAPEL (ST. MARY CHAPEL)	30
	N 39° 05' 41.15" E 44° 32' 31.90"	
4.	ՍԲ. ԱՍՏԻԱԾԱԾԻՆ ԿԱՄ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԻ ՓՈՔՐ ՄԱՏՈՒՌ SOURB ASTVATSATSIN CHAPEL (ST. MARY CHAPEL) (SMALL CHAPEL OF THE SITE OF MARTYRDOM)	32
	N 39° 05' 42.65" E 44° 32' 28.20"	
5.	ՍԲ. ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍԻ ՄԱՏՈՒՌ CHAPEL OF ST. SANDUKHT THE VIRGIN	33
	N 39° 04' 46.79" E 44° 33' 28.72"	
6.	ՎԱՆՔԻ (ԳԱՐԱՔԻԼԻՍԱ) ԳՅՈՒՂԻ ՄԱՏՈՒՌ CHAPEL OF VANKI (GHARAKILISA) VILLAGE	36
	N 39° 05' 25.79" E 44° 32' 39.86"	
7.	ԾՈՐԾՈՐԻ ՍԲ. ԱՍՏԻԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ SOURB ASTVATSATSIN MONASTERY OF TSORTSOR (ST. MARY MONASTERY)	37
	N 39° 11' 16.80" E 44° 28' 34.50"	
8.	ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ SOURB STEPANOS NAKHAVKA MONASTERY (ST. STEPHEN THE PROTO-DEACON).....	43
	N 38° 58' 44.80" E 45° 28' 24.00"	
9.	ՀԻՆ ԶՈՒՂԱՅԻ ԱՆԴՐԵՈՐԴԻ (ՀՈՎԻ) ԵԿԵՂԵՑԻ CHURCH OF ANDREORDI (HOVVI CHURCH), OLD JUGHA VILLAGE SITE.....	56
	N 38° 58' 31.37" E 45° 34' 21.98"	
10.	ԴԱՐԱՇԱՄԲ ԳԻՒՂԱՏԵՂԻ DARASHAMB VILLAGE SITE.....	60
	N 38° 59' 28.03" E 45° 27' 05.95"	
11.	ԴԱՐԱՇԱՄԲԻ ՍԲ. ԱՍՏԻԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ SOURB ASTVATSATSIN CHURCH OF DARASHAMB (ST. MARY CHURCH)	63
	N 38° 59' 27.93" E 45° 27' 08.66"	

ՄԲ. ԹԱԴԵՈՍ ՄՈՒԲԵՎՈՍ ՎԱՆԲ

Տեղադրություն. գտնվում է Իրանի ԻՋ Արեւմտեան Ատրպատական նահանգի Մակուի շրջանի Վանք կամ Ղարաքիլիսա գիւղի հարեանոթեանը՝ Մակու քաղաքից 23 կմ հարավ (Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գաւառ):

Պատմություն. Քրիստոսի 12 աշակերտներից Թադէոս Առաքեալը, քարոզելով Հայաստանում, գալիս եւ հասնում է արքունի ամառանոց Շաւարշան, որտեղ Սանատրուկ արքայի հրամանով նահատակւում է 66 թ. բլրի գագաթին եւ ամփոփւում նոյն վայրում՝ ժայռին կից արեւելեան կողմում, որտեղ այժմ Սբ. Նահատակ մատուռն է:

485-486 թթ.՝ Յովհան Մանդակունի կաթողիկոսի օրօք, Կիրակոս ճգնաւորի տեսիլքով բացալայտւում է Սբ. Թադէոս Առաքեալի նշխարների տեղը: Դրանց մի մասը նահատակման վայրից տեղափոխւում է հարաւարեւելեան կողմի՝ աւելի ցածրադիր ընդարձակ տարածք, որտեղ եւ հիմնւում է Թադէոս Առաքեալի կամ Թադէի վանքը: Այդ գիւղի առթիւ սահմանաւճ տօնը հետագայում վերածւում է բազմամարդ ուխտագնացութեան, որն աւանդաբար պահպանւել է մինչ օրս:


SOURB TADEVOS ARAKYAL MONASTERY

ST. THADDEUS THE APOSTLE MONASTERY

Location. The monastery of Sourb Tadevos Arakyal (St. Thaddeus the Apostle) is located in the neighbourhood of Vank (Gharakilisa) Village, 23 km south of Maku, the capital of the county of the same name, West Azerbaijan Province, Islamic Republic of Iran (in the historical Armenian district of Artaz, Vaspurakan Province, Armenia Maior).

History. In the 1st century AD, one of Christ's 12 apostles, Thaddeus, arrived in Armenia to preach Christianity there. However, in 66, when he reached the town of Shavarshan, the summer residence of the royal family, in Artaz District, he was tortured to death on the order of the Armenian king Sanatruk. His remains were buried in the site of his martyrdom, east of a rock at the top of a hill, where the chapel of Sourb Nahatak (Holy Martyr) stands today.

In 485 to 486, in the days of Armenian Catholicos Hovhan Mandakuny, the apostle's remains were unclosed thanks to a vision seen by a hermit named Kirakos. Part of them were re-buried in a lower site south-east of the aforementioned rock where later the monastery of Sourb Tadevos Arakyal (St. Thaddeus the



Հիմնադրման ստույգ ժամանակը յայտնի չէ։ Ասանդութիւնն այն վերագրում է մեր քականութեան առաջին դարին։ Այդ ժամանակներից սկսած՝ Արտազում եղել է եպիսկոպոսական նստավայր, որը 301 թ. քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելուց յետոյ էլ շարունակել է իր գոյութիւնը։

633 թ.՝ Եզր Փառաժնակերտցի կաթողիկոսի օրօք, Կարին քաղաքում հրաւիրած եկեղեցական ժողովին մասնակցում էր նաեւ Արտազի Տիրատուր արքեպիսկոպոսը։

1116 թ. յիշում է եպիսկոպոսանիստ վանքի արեւմտական, գիտնական Գրիգոր Ամատունին։

1243 թ. Սիւ մայրաքաղաքում հրաւիրած եկեղեցական ժողովի մասնակիցների թւում էր նաև վանքի առաջնորդ Յովսէփ վարդապետը։ Նա 1247 թ. վերանորոգում է թուրք-սելջուկների ու վրացիների աւերած վանքը եւ գաւիթ կառուցում։

1285 թ. Կիլիկիայի հայոց Լեւոն Գ թագաւորը գիտնական Թորոս փիլիսոփայի ընկերակցութեամբ, որպէս ուխտաւոր, լինում է նաեւ Թաղէոս Առաքելի վանքում եւ հիւրընկալում Արտազի առաջնորդ վանահայր Տիրացոյ եպիսկոպոսին։

1295-1297 թթ. մոնղոլ Նովբուզ զօրապետի ղեկավարութեամբ թաթարները գրաւում են վանական համալիրը, աւերում են եւ թալանում։

1315 թ. ձեռագրերից մէկում վանքը յիշում է որպէս Սր. Թաղէոս Առաքելի հռչակաւոր աթոռ եւ հանգստարան։

1319 թ. աւերիչ երկրաշարժից հիմնովին կործանւում են եկեղեցին եւ վանական համալիրի միւս կառոյցները։

Apostle) or Sourb Tade was founded. The Armenian Church celebrates the feast of the discovery of these holy relics every year, hundreds of pilgrims visiting the monastery on this day.

The exact time of the foundation of the monastery remains obscure. It has traditionally been traced back to the 1st century AD, when a bishop's seat was established in the district of Artaz (bishops also resided here after the adoption of Christianity in Armenia in 301).

One of the archbishops of the diocese of Artaz, Tiratur, participated in the Church Council of Karin held in 633, in the days of Catholicos Yezr Parazhnakerttsy.

In 1116 mention was made of Bishop Grigor Amatuny, a scholar and Prior of the monastery of St. Thaddeus the Apostle, which served as a bishop residence.

In 1243 Prior Hovsep, who was an archimandrite, participated in the Church Council of Sis. In 1247 he built a narthex for the monastery and carried out some renovation in the complex which had been destroyed by the Seljuk-Turks and Georgians.

In 1285 the Armenian king of Cilicia, Levon III, made a pilgrimage to St. Thaddeus accompanied by the prominent philosopher Toros. They were hosted by Bishop Tiratsu, Primate of Artaz Diocese and Prior of the monastery.

In 1295 to 1297, the monastery was destroyed and plundered by some Mongol-Tatars who were led by Novruz.

A manuscript of 1315 mentions the monastery as a renowned diocese centre and the place where the relics of St. Thaddeus were kept.





Երկրաշարժից յետոյ Զաքարիա Ծործորեցի եպիսկոպոսի գլխաւորութեամբ հիմնովին վերակառուցում է վանքը: Կործանւած նախկին եկեղեցու պատերը հիմք ընդունելով՝ 1319-1329 թթ. վերակառուցում է Մայր եկեղեցին սրբատաշ մոխրագոյն բազալտ քարերով, որը մեծ մասամբ պահպանւել է մինչ օրս: Կառուցում է նաեւ վանքի՝ գետնաթաղ խողովակներով բերած աղբիւրը:

1330-ական թթ. ըստ ընդհանուր Մեսրոպ Արտազէցին հիմնում է հոգեւոր ուսմունքի լսարան:

1385 թ. Ոսկէ Հորդայի Թողթամիշ խանը, արշաւելով Ատրպատական, թալանում եւ ւաւերում է վանքը:

14-15-րդ դդ.՝ Լենկ-Թեմուրի աւերիչ արշաւանքների ժամանակ, Սբ. Թադէն դարձեալ բազմիցս թալանում է եւ ւաւերում:

1426 թ. կարա-կոյունլու թուրքմեն տիրակալ Սքանդարը (Իսկանդար) օժանդակում է Թադէոս Առաքելի վանական համալիրի վերաշինութեամբ:

Ըստ 1574 թ. Յովհաննէս երեցի ընդօրինակած Աւետարանի յիշատակարանի՝ մի շարք եպիսկոպոսներ եւ միաբաններ նորոգում են վանքը, կառուցում ժամատան ծածկը:

1650-1653 թթ. վանահայր Սկրտիչ եպիսկոպոս Մակեցին Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի (1633-1655) կարգադրութեամբ միաբանութեան ջանքե-

After a disastrous earthquake had totally destroyed the monastic church and other buildings in 1319, Bishop Zakaria Tsortsoretsy initiated complete reconstruction there. Between 1319 and 1329, the main church of the monastery which had collapsed was replaced by a new one erected over its lower masonry. This church which is built of finely-dressed grey basalt has mostly preserved its original features. Zakaria Tsortsoretsy also built a fountain which received water through an underground pipeline.

In the 1330s, senior teacher Mesrop Artazetsy opened a class of religious studies in the monastery.

In 1385 the province of Atrpatakan (Iranian Azerbaijan) was invaded by one of the khans of the Golden Horde, Toghtamish, who plundered and destroyed the monastery of St. Thaddeus. It suffered further destruction and pillage during the disastrous inroads of Tamerlane between the 14th and 15th centuries.

In 1426 one of the Turkoman rulers of the Kara Koyunlu tribes, Skandar (Iskandar), provided some financial assistance for the renovation of the monastery.

According to the colophon of a Gospel copied by Priest Hovhannes in 1574, some bishops and monks



րով վերաշինութեան բուռն աշխատանքներ է ծաւալում: 1650 թ. նորոգում են կիսաքանդ եկեղեցին եւ այն խորանը, որտեղ, ըստ աւանդութեան, ամփոփւած էին Թադէոս Առաքեալի նշխարները, ինչպէս նաեւ հների տեղում կառուցում Սբ. Սանդուխտ կոյսի եւ Սբ. Նահատակ մատուռները:

1664 թ. գարնանն Իսահակ (Սահակ) Մակեցի վարդապետը ձեռնարկում է մենաստանի շրջապարսպի հիւսիսային հատւածի նորոգութիւնը: Այնուհետեւ վերանորոգման աշխատանքներին աջակից է լինում նրա օգնականը՝ վարդապետ Սարգիս Կաֆայեցին եւ 1679-1685 թթ. հիմնովին վերանորոգում եկեղեցին, իսկ 1691 թ., արդէն որպէս վանահայր, ընդարձակում վանքի շրջապարսպի աշտարակներով, խցերով եւ այլ շինութիւններով:

1692-1693 թթ. վերանորոգում են սեղանատունը, շրջապարսպի աշտարակներից մէկը, վանականների՝ հարաւային, արեւմտեան վնասուած խցերը եւ հիւսիսային խցերի կէտը, ինչպէս նաեւ ուխտատուների կացարանների մի մասը:

1696 թ. ապրիլ-մայիս ամիսներին երկրաշարժը մեծ վնաս է հասցնում վանքին: Աւերում են եկեղեցու գմբէթի արեւելեան հատւածը, շրջապարսպի ու նորակառոյց խցերը:

initiated further overhaul in the monastery, also building the roof of its narthex.

Between 1650 and 1653, on the order of Catholicos Pilipos Aghbaketsy (1633 to 1655), large-scale renovation activities were carried out in the monastery by the Prior, Bishop Mkrtich Makvetsy. In 1650 he repaired the semi-ruined church as well as the altar where St. Thaddeus' relics are believed to have been buried. Bishop Mkrtich also reconstructed the chapels of St. Sandukht and Sourb Nahatak (Holy Martyr) located nearby.

In the spring of 1664, Archimandrite Isahak (Sahak) Makvetsy started the renovation of the northern walls of the monastery assisted by Sargis Kafayetsy. In his turn, the latter carried out complete repairs in the monastic church between 1679 and 1685. Besides, in 1691, Archimandrite Sargis Kafayetsy, already Prior of the monastery, consolidated the walls with towers and built some cells and chambers inside them.

During the repairs of 1692 to 1693, the southern and western cells as well as one of the towers and the refectory were repaired together with half of the northern cells and part of the pilgrims' dwellings.

The monastery was again seriously damaged by the earthquakes of April and May 1696 which overthrew



Չաքարիա առաջնորդի օրոք (1735-1743) վերսկսված թուրք-պարսկական պատերազմները դարձնել մեծ վնաս են հասցնում վանքին:

1784 թ. վերականգնում են շրջապարսպի հարապակի աշտարակն ու յարակից հատածները, իսկ 1787 թ. կառուցում են գալիքն ու ջրաղացը:

1790-ական թվականների սկզբներին՝ 1791-1792 թթ., վանական համալիրը լրիվ էր եւ չէր գործում:

1793 թ. նորոգում է վանքի աղբիւրը, իսկ մէկ տարի յետոյ՝ 1794 թ., կանգնեցում է սեղանի քանդակազարդ խաչկալը:

1795 թ. Ատրպատական թափանցած Աղա Մուհամմադ խանի զօրքերն աւերում են Սբ. Թադէն: Մէկ տարի անց՝ 1796 թ., վերաշինում է դռներս 1787 թ. կառուցած ջրաղացը:

1810-ական թվականներին վանքի վերանորոգման գործը յանձնարարում է Սիմէոն արքեպիսկոպոս Բզնունուն, որի հրամանով քանդում են գալիքն ու հին եկեղեցու արեւմտեան հատածը եւ ձեռնամուխ լինում նոր եկեղեցու կառուցմանը: Այդ նպատակով 1813 թ. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան վանահօրն ուղարկում է 100 թուման:

1817 թ. վերականգնում են առաջնորդարանը, վանականների վնասված խցերը, ուխտաւորների կացարանները եւ ջրաղացը, իսկ 1819 թ. Մակի չիսէին խանի նիւթական օժանդակութեամբ կառուցում է շրջապարիսպը: Սակայն վանքի վերա-

the eastern part of the church dome, also destroying the walls and some newly-built cells. It further suffered due to the Turko-Persian wars that resumed in the mid-18th century, in the days of Prior Zakaria (1735 to 1743).

In 1784 the southern tower of the monastic walls and the adjoining sections were restored. In 1787 a narthex and a mill were built in the complex. In 1793 the fountain of the monastery was repaired (although the complex was mentioned as abandoned in 1791 to 1792), and in 1794 the altar of its main church was embellished with a ciborium adorned with reliefs.

In 1795 St. Thaddeus was plundered and destroyed by the troops of Agha Mohammed Khan, who had invaded the province of Azerbaijan.

In 1796 the monastic mill was reconstructed.

During the renovation of the 1810s, Archbishop Simeon Bznuny initiated the construction of a new church, for which he pulled down the narthex and the western section of the existing church. In 1813 the Persian prince Abbas-Mirza sent 100 tomans to Archbishop Simeon to assist him in his activities. In 1817 the Primate's residence, monks' cells, pilgrims' dwellings and the mill were restored. In 1819 the monastery was enclosed within walls with the financial support of Hyusein Khan of Maku. Unfortunately, in 1820, on Catholicos Yeprem's order, Simeon Bznuny was appointed Prior of the monastery of Sourb Tovma Arakyal (St. Thomas the Apostle), in Agulis Village of Nakhijevan, due to which, the renovation of St. Thaddeus remained incomplete; besides, the belfry and roof of the new church were left unfinished.

The monastic buildings were seriously damaged by the disastrous earthquake of Akori, which took place on 20 June 1840.

In 1867 the semi-ruined tower of the eastern walls was restored with financial means provided by the inhabitants of Kishmishtapa Village.

In 1886 the renowned monastery was described as abandoned and in a state of disrepair.

In the late 19th century, some partial renovation was carried out in the monastery under the patronage of the brothers Tumanian, who were from Gharadagh by birth, but lived in Tabriz and Baku. In 1901 Catholicos Mkrtich Khrimian addressed a *kondak* of gratitude to them for their contribution (a *kondak* is a religious statement of the Armenian Apostolic Church or a decree issued by the Catholicos).

According to the *Calculations of Calendar* (in Armenian) compiled by Archimandrite Gevorg in the early 20th century, the main monastic church and the adjacent buildings underwent renovation every year.

During the same period, mention was made of Assistant Prior, Archimandrite Garegin, who had initiated the construction of a monastic school.

շինութեան գործը չի աւարտում. զանգակատունը եւ նոր եկեղեցու ծածկերը չեն ամբողջանում, քանի որ 1820 թ. Եփրեմ կաթողիկոսի կարգադրութեամբ Սիմէոն Բզնունին նշանակում է Ագուլիսի Սբ. Թովմա Առաքեալի վանահայր:

1840 թ. յունիսի 20-ի Ակոռիի ահեղ երկրաշարժը նոր հարած է հասցնում վանքին:

1867 թ. Քիշմիշթափա գիւղի հասարակութեան միջոցներով վերականգնում է շրջապարսպի արեւելակողմի կիսափուլ աշտարակը:

1886 թ. Թադէոս Առաքեալի հռչակատու վանքը դարձեալ անշուք էր եւ քրտած:

19-րդ դարի վերջերին վանքում կատարում են մասնակի նորոգութիւններ: Թարիգում եւ Բաքում բնակող ծնունդով դարադաղցի Թումանեան եղբայրները, որոնք նիւթապէս աջակցել էին գործին, 1901 թ. արժանանում են Խրիմեան Հայրիկի շնորհակալական կոնդակին:

Գէորգ վարդապետի՝ 20-րդ դարի սկզբին կազմած «Տոմարի հաշիւների» բովանդակութիւնից պարզում է, որ ամեն տարի նորոգել են տաճարն ու յարակից շինութիւնները: Միեւնոյն ժամանակ փոխվանահայր Գարեգին վարդապետը ձեռնարկում է վանական դպրոցի կառուցումը:

1910 թ. Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանի վկայութեամբ վանքը գտնում էր անմխիթար վիճակում, եւ առաջին հերթին անհրաժեշտ էր վերանորոգել տանիքը:

Իրան թափանցած բուրքական զօրքերը 1918 թ. ապրիլին վանքում ապաստանած հայերի՝ 33-օրեայ դիմադրութիւնից յետոյ գրաւում են վանքը, թալանում եւ կոտորում նրանց: Ողբերգական այս դէպքերից յետոյ Թադէոս Առաքեալի վանքն իր շրջակայքով դարձեալ ամայանում է:

1918 թ. վանքի կոտորածից փրկւած 10-12 հայ ընտանիք 1919 թ. վերադառնում է վանք եւ խցերում բնակութիւն հաստատում մինչեւ 1946 թ.:

Ներսէս արքեպ. Մէլիք-Թանգեանի՝ արքեպիսկոպոսի՝ 1931 թ. յուլիսի 1-ին իրանահայութեանն ուղղւած յատուկ կոչից յետոյ հանգանակութիւն է կատարում Թադէոս Առաքեալի վանքը նորոգելու համար:

1955 թ. դեկտեմբերին N 405 հրամանագրով վանքը ներառւում է Իրանի պատմական յուշարձանների ցուցակում:

1960-1970-ական թականներին գերմանական արշաւախումբը (ղեկավար՝ Վոլֆրամ Կլալս) վանական համալիրի տարածքում եւ մերձակայքում կատարում է հնագիտական աշխատանքներ:

2000 թ. կառավարութեան առաջարկութեամբ Թադէոս Առաքեալի վանքը ներկայացւում է ԻԻՆԵՍԿՕ-ին՝ համաշխարհային յուշարձանների ցուցակում ներգրաւելու համար:



In 1910 Bishop Karapet Ter-Mkrтчian, Primate of the diocese of Atrpatakan, reported that the monastery was in a state of utter dilapidation, and its roof needed urgent overhaul.

In order to defend themselves during the Turkish invasion of Azerbaijan Province in April 19-18, a number of Armenians moved to the monastery of St. Thaddeus. After a siege of 33 days, it was taken and plundered, the Armenians being slaughtered. These tragic events led to the complete abandonment of the monastery and its neighbourhood.

About 10 or 12 Armenian families which had survived the carnage of 1918 returned to the monastery in 1919 and lived there until 1946.

On 1 July 1931, Archbishop Nerses Melik-Tangian called on all Armenians living in Iran to make donations for the renovation of the monastery. Thanks to this initiative, some overhaul was carried out there.


In December 1955 the monastery of St. Thaddeus the Apostle was included on the list of historical monuments of Iran (order no. 405).

Between the 1960s and 1970s, a German expedition led by Wolfram Kleis carried out some archaeological research in the monastery and its neighbourhood.

In 2000 the Government of Iran nominated the monastery of St. Thaddeus for inscription on UNESCO's World Heritage List. During the 32nd ses-







2008 թ. յուլիսի 2-ին ԻՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի 32-րդ նստաշրջանում վանքն ընդգրկվում է կազմակերպության ցուցակում՝ որպես Իրանի պատմամշակութային 9-րդ կոթող:

2008 թվականից մինչ օրս վանական համալիրը պահպանում է վերանորոգում է Իրանի մշակութային ժառանգության կազմակերպությանը կից Պատմական եկեղեցիների կենտրոնի հսկողությամբ եւ ֆինանսատրամաբ: Վերանորոգման աշխատանքները կատարում են ըստ ԻՒՆԵՍԿՕ-ում եւ Իրանում հաստատված նախագծի: Այն մեծածառու լինելու պատճառով կատարում է մի քանի փուլով:

2017 թ., ըստ նախագծի, հաւաքեց եւ վերաշարւեց երկու գմբէթների վեղարի քայքայված քարէ շերտը, ջրամեկուսացեցին եւ ամրակայեցին գմբէթները եւ կրող թմբուկը, ինչպէս նաեւ տեղադրեցին նոր պատրաստված եւ օժտած զոյգ խաչերը:

2018 թ., Սբ. Թադէոս վանքի եռօրեայ ուխտագնացութեանն ընդառաջ, վանական համալիրի տարածքում վերանորոգեցին, բարեկարգեցին եւ կահաւորեցին թէյատունը, ցուցասրահը եւ յուշանւէրների վաճառքի սրահը: Բացումը կատարեց ուխտագնացութեան օրերին Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր եպս. Չիֆթեանի ձեռամբ եւ օրհնութեամբ: Այժմ վանքն ունի կողմնակի յարմարութիւններ զբօսաշրջիկներին սպասարկելու համար:

2019 թ. կատարեցին բարեկարգման մի շարք աշխատանքներ: Լուսատուրեցին եւ կանաչապատեցին վանքի բակերը: Ոմն բարերարի նիւթական օժանդակութեամբ երկու մեծ եւ շքեղ ջահերով լու-

sion of the UNESCO World Heritage Committee, held on 2 July 2008, the monastery was included on this list, becoming the 9th historical site in Iran to have been inscribed by this organization.


Since 2008 the monastery has been under the protection of the Base of Historical Churches of Iran, which has been supervising and financing its restoration since the same year.

The restoration project has been approved by the UNESCO and the corresponding authorities of Iran. The Base has been implementing this large-scale work in several stages.

In 2017 the corroded stone coverings of the spires of both the monastic churches were re-laid with new stones; the domes were conserved and provided with water insulation; the tambour of the New (Jermak) Church was conserved, too, after which, the newly-made and consecrated crosses were installed on top of the churches.

In 2018, on the eve of a three-day annual pilgrimage to the monastery, its tea house, exhibition hall and souvenir shop were repaired and furnished. The opening of these places was held during the pilgrimage days, with the blessing of Bishop Grigor Chiftjian, Primate of the diocese of Atrpatakan. Now the monastery has additional facilities to receive tourists.

In 2019 the renovation of the monastic complex continued: the courtyards were provided with illumination and planted with trees and greenery. Thanks to the financial assistance of a benefactor, the monastery acquired two big, splendid chandeliers; besides, a



սատուրեց եկեղեցու ներքին տարածքը, մաեւ պատ-
րաստուեց եկեղեցու գլխաւոր մուտքի քայքայած
դռան կրկնօրինակը:




Նոյն թականին, ըստ մախագծի, Ճերմակ կամ
Նոր եկեղեցու կառուցման ժամանակ անաւարտ
մնացած երկթեք տանիքը, ինչպէս մաեւ զանգա-
կատունը ծածկւեցին ժամանակակից պղնձէ եռա-
շերտ միւթով, որով դրանք կը փրկւեն տանիքից
ներթափանցող ջրերի քայքայիչ ազդեցութիւնից:
Աշխատանքները ֆինանսաւորեց «Հայաստանի
զարգացման մախաձեռնութիւններ» (IDeA Foun-
dation) հիմնադրամը:

Ճարտարապետութիւն. պարսպապատ վանա-
կան համալիրը բաղկացած է երկու՝ արեւելեան
(պաշտամունքային) եւ արեւմտեան (տնտեսական)
հատւածներից: Արեւելեան մասի կենտրոնում եկե-
ղեցիներն են՝ շրջափակւած պարսպին կից միա-
շարք բնակելի սենեակներով՝ խցերով, սեղանա-
տնով, մառաններով եւ վանահօր սենեակով:
Պարսպի աշտարակներում նոյնպէս գետեղւած են
սենեակներ:

Արեւմտեան հատւածում տնտեսական օժան-
դակ բաժինն է, որի կառույցները կենտրոնացած են
հարաւարեւելեան անկիւնում: Այստեղ շէշտւած է
ձիթհանի համալիրն իր կեղծ գմբէթով:

Վանքն ունի երկու դարպաս՝ բացւած արեւ-
մտեան եւ հարաւային պարիսպների կենտրոնա-
կան մասերում: Հարաւայինը մտնում է պաշտա-
մունքային, իսկ արեւմտեանը՝ տնտեսական բակ:

Ի տարբերութիւն պաշտամունքային սրբատաշ
շինութիւնների՝ միւսները՝ խցերը, տնտեսական



կառոյցները, պարսպապատը, ունեն անմշակ քարերով կոպտատաշ շարածք:

Հին եկեղեցի. կառուցւած է մուգ սև քարով եւ ունի զոյգ որմնասիւներով գմբէաւոր դահլիճի յօրինւածք: Որմնասիւնները եւ խորանի անկիւններն իրար կապող կամարների վրայ յենւած է ներքուստ գլանաձեւ, արտաքուստ 12 նիստանի կիսաշրջան թմբուկով եւ սրածայր վեղարով աւարտող գմբէքը: Այն ունի չորս լուսամուտ: Գմբէքատակ քառակուսուց անցումը գմբէքին կատարւած է անկիւնային առագաստների միջոցով: 1794 թ. յաւելւած խաչկալով խորանը բաժանում է երկու մասի՝ արտաքին ուղղանկիւն թաղածածկ հատւածի եւ կիսաշրջան յատակագծով բուն խորանի, որը գմբէքարդի փոխարէն ծածկւած է երեք միակենտրոն փոխհատուղ թաղերով: Մէկ լուսամուտ ունեցող բուն խորանի երկու կողմերում՝ պատերի մէջ, բացւած է մէկական ուղղանկիւն խորշ:

Խաչկալի սիւների քիւերն ունեն շքաքարային (ստալակտիտային) մանր զարդաքանդակ, իսկ մուտքերից վեր՝ շրջանակների մէջ, կան արձանագրութիւններ: Չորս աստիճանով բարձր բեմի ճակատը զարդարւած է 13 կամարներով, որի կենտրոնական կամարում ներառւած է խաչաքանդակ, ինչը խորհրդանշում է Բրիստոսին, իսկ 12 կամարները՝ առաքելներին: Խորանի երկու կողմերում աւանդատներն են:

Ուղղանկիւն յատակագծով հարաւային աւանդատունը ծածկւած է թաղով, որն արեւելեան կողմում ունի բարձր բեմ: Աւանդատունը լուսաւորւում է արեւելեան պատին բացւած լուսամուտով, որի տակ՝ ներքեւի մասում, առկա է մեծ խորշ, իսկ հիւսիսային պատին բացւած խորշի անցքը բարձրացնում է աւանդատան երկրորդ յարկի ուղղանկիւն թաղածածկ ցածր գաղտնարանը: Եւս մի խորշ էլ կայ աւանդատան հարաւային պատին:

Ի տարբերութիւն հարաւայինի՝ հիւսիսային աւանդատունն արեւելքում աւարտւում է կիսաշրջան փոքր խորանով, որի կլոր պատին ագուցւած է սեղանի քարը: Լուսամուտը բացւած է հիւսիսային պատի մէջ:

Բացի գմբէքի եւ խորանի լուսամուտներից՝ եկեղեցին լուսաւորւում է նաեւ հիւսիսային եւ հարաւային պատերից բացւած մէկական լուսամուտով: Հիւսիսային պատի կենտրոնում 1319 թ. երկրաշարժից յետոյ եկեղեցու վերակառուցման մասին պատմող արձանագրութիւնն է:

Եկեղեցու ներքին եւ արտաքին հին շերտն աւելի զուսպ է եւ միագոյն, իսկ վերին հատւածները, որոնք պատկանում են ավելի ուշ շրջանի, ունեն գունային լուծումներ. խորանը, գմբէքի թմբուկն արտաքուստ եւ գմբէքի կոր մակերեսը ներքուստ ունեն նոյն գունային լուծումները՝ իրար յաջորդող հորիզոնական մուգ (բազալտ) եւ բաց (դելմաւուն ֆել-

duplicate was made to replace the corroded wooden door of the main entrance to the New Church.

In the same year, the gable roof of the New Church, which had been left unfinished during its construction, as well as its belfry was covered with a modern three-layer copper material. The work thanks to which these structures will be protected against rainwater was financed by IDEa (Initiatives for the Development of Armenia) Foundation.

Architectural Description. The monastic complex which is enclosed within walls consists of two parts, eastern and western. The eastern part comprises the churches around which, closer to the walls, a number of rooms (cells, cellars, a refectory and the prior's room) are located. Some more chambers are built inside the towers. The western part contains some household buildings which are mainly located at its south-eastern corner. Special mention should be made of an oil press complex which has a pseudo-dome.

Each of the western and southern walls of the monastery has a gate opening from its central part. The southern gateway leads to the churches, and the western one to the yard around which the household buildings are located.

The religious buildings are laid with finely-dressed stone, while the cells, household buildings and walls have rough masonry.

The Older Church of the monastery, which is built of black stone, is a domed hall of two pilasters connected by the dome-bearing arches which also link them with the corners of the altar. The dome which is inwardly cylindrical has four windows, its dodecahedral semi-circular tambour ending in a pointed spire. The transition from the underdome square to the dome is carried out through angular pendentives. A ciborium erected in the altar in 1794 divides it in two parts: the part outside the ciborium which is rectangular and vaulted, and the altar proper, which is semi-circular. Instead of a concha, the altar has three intersecting vaults of a single centre. The altar which has two rectangular niches on both its sides is illuminated by a window.

The cornices of the ciborium pillars are decorated with small stalactites, some inscriptions being enclosed within the frames above the ciborium entrance doors. Four steps lead onto the elevated bema the front of which is adorned with a blind arcade of 13 arches: 12 of them symbolise the apostles, and the central one encloses a cross which stands for Christ.

There is a pastophorion on either side of the altar. The southern one, which is rectangular in plan, is vaulted and has an elevated bema in the east. It is illuminated through a window opening from its eastern wall. There is a large recess beneath this window. Each of

The complex underwent renovation in 1968 as well, but it was again damaged in 1975 when an earthquake destroyed the four arched windows of its walls.

Between 1985 and 1988, the Iranian Cultural Heritage Organization restored the roof of the main monastic church under the patronage of Land and Culture Organization.

Since 2000 the monastery of St. Stephen has been under the protection of the Base of Historical Churches of Iran, which has been supervising and financing its restoration since the same year.

In 2008, thanks to the efforts of the Ministry of Cultural Heritage, Handicrafts and Tourism of Iran, the monastery was included on the UNESCO List of World Heritage Sites together with the monastic complex of Sourb Tadevos Arakyal (St. Thaddeus the Apostle).

In 2017 an old hall once used by the monks was rebuilt into a museum.



2019 թ. ամարտում են եկեղեցու ներքին նկարազարդումների վերանորոգման աշխատանքները, որոնք սկսել էին դեռևս 2016 թ. իրանցի վերանորոգող մասնագետի կողմից:

2019 թ. յուլիսի 24-ին հոծ ուխտավորների ներկայությամբ օծում է խորանի Սրբապատկերն Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգոր եպս. Զիֆթեանի ձեռամբ:

Ճարտարապետություն. ուղղանկյուն յատակագծով պարսպապատ վանական համալիրը բաղկացած է երեք հատումներից: Հիսխում եկեղեցական բակն է, կենտրոնում՝ տնտեսական բաժնին կից վանքի մուտքը, հարևում՝ միաբանության բակը: Եկեղեցիները, զանգակատունը եւ վանքի դարպասը կառուցված են սրբատաշ քարով, իսկ միւս շինություններն ունեն կոպտատաշ շարվածք:

Եկեղեցական բակի կենտրոնում գտնվում է գլխավոր եկեղեցին՝ Սբ. Ստեփանոս Նախավկան: Հիսխից նրան կից է Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին, իսկ հարավից՝ եռաշարկ զանգակատունը:

Սբ. Ստեփանոս Նախավկայ եկեղեցի. արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև եռախորան, կենտրոնագմբէք կառույց է:

Հարավային եւ հիսխային հնգանիստ խորանների խորությունն անլի փոքր է, քան եօթանիստ արեւելեան աւագ խորանինը: Նրա նիստերը զարդարված են միահիստող երկշարկ կամարաշարով, որի առաջին յարկում չորս վեցանկյուն եւ երեք ուղղանկյուն խորշեր են, իսկ երկրորդ յարկի կենտրո-

The year 2019 marked the completion of the renovation of the frescoes of the church, which had started in 2016 by an Iranian specialist.

On 24 July 2019, Bishop Grigor Chiftjian, Primate of Atrpatakan Diocese, consecrated the altarpiece in the presence of many pilgrims.

Architectural Description. The monastic complex which is enclosed within walls is rectangular in plan and consists of three parts: the northern church yard; the central entrance to the monastery (adjoining the household buildings), and the southern courtyard around which some halls and cells are located. The churches, belfry and gateway are built of finely-dressed stones, while the other structures have rough masonry.

The main church of the monastery, **Sourb Stepanos Nakhavka** (St. Stephen the Proto-Deacon), stands in the centre of the northern church yard, adjoined by the church of Sts. Pghos and Petros (Peter and Paul) to the north, and by a three-floor belfry to the south. Rectangular outwardly and cruciform inwardly, St. Stephen Church has three apses, two of which, the southern and northern ones, are pentahedral, while the eastern (main) one is heptahedral. The southern and northern apses are not so deeply-set as the eastern one, the facets of which are adorned with a double arcature of interlacing arches. The lower ones have four hexagonal and three rectangular niches, and the upper ones contain the cruciform altar window which opens from



նում բացւած է խորանի խաչաձեւ լուսամուտը: Խորանի կենտրոնում՝ սեղանի վրայ, կառուցւած է քառասին խաչկալ: Հինգ աստիճանով բարձր բեմի ճակատը մշակւած է սեւ-սպիտակ քարերի համադրութեամբ զարդանախշերով: Դասը սրահից բաժանւած է փայտէ բազրիքով: Դասի անկիւններից բացւում են արեւելեան աւանդատների մուտքերը:

Սրահի կենտրոնում գմբէքատակ քառակուսուց անցումը 16 միստանի թմբուկին իրականացւած է միահիւստող սլաքաձեւ կամարներով մշակւած առագաստներով: Նմանատիպ կամարներով է յարդարւած նաեւ թմբուկից գմբէք անցումը: Թմբուկը ներսից զարդարւած է կամարաշարով:

Հիւսիսային եւ հարաւային խորանների արեւելեան անկիւններում կան սեղաններ՝ ամփոփւած քառասին խաչկալների ներքոյ: Հիւսիսային խորանում՝ մկրտութեան առաջանի խորշից վեր, լուսամուտը խաչաձեւ է, իսկ հարաւային խորանի լուսամուտը ծառայում է որպէս զանգակատան երկրորդ յարկ տանող մուտք:

Եկեղեցին արեւելեան եւ արեւմտեան անկիւններում ունի կրկնայարկ, ուղղանկյուն յատակագծով, թաղածածկ երկուական աւանդատուն: Արեւելեան անկիւնների աւանդատներն աւելի մեծ են, քան արեւմտեան անկիւններիներ: Առաջին յարկի աւանդատների արեւմտեան պատերի մէջ երկրորդ յարկ տանող աստիճաններն են: Արեւմտեան երկրորդ յարկի աւանդատները պատշգամբով միանում են կանանց օթեակին, որը յենւած է ութանիստ երկու սիւներն իրար կապող սլաքաձեւ կամարների:

their central part. A ciborium supported by four pillars stands in the centre of the altar, adding splendour to it. Five steps lead onto the bema, the front of which is decorated with ornaments made of black and white stones. A wooden railing separates the prayer hall from the transept.

The transition from the underdome square to the dioctahedral tambour is carried out by pendentives which are adorned with intertwining sagittal arches. Similar arches also embellish the transition from the tambour to the dome. Inwardly, the tambour is decorated with an arcature.

In the eastern corner, each of the northern and southern apses has an altar with a four-pillar ciborium over it. There is a cruciform window above the niche of the font, which is in the northern apse. The window of the southern apse serves as an entrance to the second floor of the belfry.

There are two double-floor, vaulted pastophoria of a rectangular plan in each of the eastern and western corners of the church. The eastern pastophoria are larger, their entrances opening into the corners of the transept. The steps built in the western wall of each of these pastophoria lead to the second floor, where the western pastophoria are connected through a balcony resting on arrow-shaped arches that link two octahedral pillars. The only entrance to the church, opening from its western facade, leads to an entrance hall located below the balcony.



Եկեղեցու միակ մուտքը բացում է արեւմտեան ճակատից, որը տանում է օթեակի տակ գտնուող մախարահ:

Եկեղեցին ներքուստ ամբողջովին շարում է աղիւսով՝ պատում սաղով, իսկ արտաքինից՝ սրբատաշ քարով: Ներսում՝ սաղի վրայ, պահպանւել են որմնանկարներ, որոնք հիմնականում զարդարում են զմբէքը եւ աւագ խորանը: Գմբէթի կենտրոնում պատկերւած մեծ վարդեակից սկսում եւ դէպի պատուհաններն են ձգում ութ ծաղկաշղթաներ: Թմբուկատակ քիւր զարդարւած է մասամբ պահպանւած ծաղկագօտիով եւ թռչուններով: Գմբէթատակ առագաստներին պատկերւած են վեցթեւան սերովբէներ եւ բուսազարդեր:

Եկեղեցին արտաքուստ յարդարւած է ճոխ զարդաքանդակներով եւ պատկերաքանդակներով: Երեք ճակատները, բացառութեամբ արեւմտեանի, մօտ 2 մ բարձրութեամբ շրջանցում են հորիզոնական հիւսածոյ զարդագօտին, որից վեր պատի մակերեսը մշակւած է կամարաշար եւ ուղղանկյուն հատւածների ռիթմիկ շարքով:

Արեւմտեան ճակատի կենտրոնում շէշուած է խոր ընկած շքաքարային (ստալակտիտային) մշակմամբ շքամուտքը, որի երկու կողմում մեծ որմնախորշեր են՝ ագուցւած փոքր խաչքարերով: Վերին հատւածում բացւած է ուղղանկյուն երեք լուսամուտ: Կենտրոնականն աւելի մեծ է եւ առնւած զարդանախշ շրջանակի մէջ: Կենտրոնական լուսամուտից վեր Խաչելութեան պատկերաքանդակն է՝ մարդկանց դէմքերով արեւն ու լուսին -

Outwardly, the church is laid with finely-dressed stones, while inwardly, it is built of brick and is plastered. The dome and main apse are adorned with frescoes: eight floral chains start from a large rosette painted in the centre of the dome and extend towards the windows. Another floral band which is partly preserved as well as some birds decorates the cornice beneath the tambour. The pendentives under the dome are embellished with six-winged seraphs and plant motifs.

The exterior ornamentation of the church is remarkably lavish. A horizontal band of woven ornaments, of a height of about 2 metres, runs around all the facades, with the exception of the western one. Above the band, the walls are decorated with a rhythmical row of blind arches and rectangular sections.

The western portal is accentuated with deeply-cut stalactites. The large niches on both sides of the portal contain small cross-stones. Three rectangular windows open from the upper part of this facade, the central one, which is larger, being enclosed within an ornamented frame. The space above this window depicts the Crucifixion with the sun, the moon, some human faces and Adam's head at the foot of the cross which is flanked by St. Mariam (Mary) and Hovhannes (John) the Apostle.

In the central part of the southern facade, above the aforementioned woven band, the Nativity is depicted showing St. Mary with infant Jesus in Her arms, Hovsep (Joseph) on Her right side, and some sheep with a shepherd on Her left side.



նը: Խաչի հիմքում Ադամի գլուխն է, իսկ երկու կողմերում՝ Մարիամ Աստածածինը եւ Յովհաննէս առաքեալը:

Հարաւային ճակատի կենտրոնում՝ հիւսածոյ ժապաւէնից վեր, Սբ. Ծննդեան պատկերաքանդակն է՝ Տիրամայրը՝ մանուկ Յիսուսը գրկում, աջում՝ Յովսէփը, ձախում՝ ոչխարներ եւ հովիւ:

Զանգակատան երկրորդ յարկի մուտքից վեր Աւետման պատկերաքանդակն է՝ Մարիամ Աստածածինը՝ Աւետարանը ձեռքին, դիմացը՝ Գաբրիէլ հրեշտակապետը՝ ծաղիկը ձեռքին, եւ Սբ. Հոգին՝ աղանու տեսքով: Աւելի վեր կայ բուսազարդ երեք վարդեակ, իսկ ներքեւում ագուցւած է երեք խաչքար:

Արեւելեան ճակատի կենտրոնում՝ զարդագօտուց վեր, աչքի է ընկնում զարդանախշ խաչաքանդակը, որի մէջ ներգծւած է արեւելեան խորանի խաչաձեւ լուսամուտը: Դրա շուրջը պատկերւած են արծիւ՝ որսը ճիրաններում, երկու ձուկ, օձ եւ առիւծ: Խաչաքանդակի երկու կողմերում խաչքարեր են, իսկ վերեւում Սբ. Ստեփանոս Նախավկայի քարկոծման պատկերաքանդակն է. կենտրոնում ծնկած, աջ ձեռքում բուրվառը բռնած Ստեփանոս Նախավկան է, վերին ձախ անկիւնում Սբ. Երրորդութեան պատկերն է՝ խաչը ձեռքին Զրիստոսը, աղանու տեսքով Սուրբ Հոգին եւ Հայր Աստածը, որը ձախ ձեռքում պահում է երկրագունդը, աջով օրհնում նահատակողին: Վերին աջ անկիւնում Ստեփանոս Նախավկային նահատակութեան պսակը յանձնող հրեշտակն է:

Ճակտոնի գագաթին՝ քիւստակին, ճանկերով զառ բռնած թեւատարած արծիւի բարձրաքանդակն է, որի երկու կողմերում կայ մէկական վարդեակ:

Above the entrance to the second floor of the belfry, the Annunciation is portrayed with St. Mary holding the Gospel, Archangel Gabriel in front of Her, holding a flower, and the Holy Spirit incarnated as a dove. Three rosettes are engraved in plant motifs above this relief, below which three cross-stones are set.

In the central part of the eastern facade, above the ornamental band, an ornate cross encloses the cruciform window of the eastern apse. The reliefs around this window depict an eagle with its prey in its claws as well as two fish, a snake and a lion. The cross is flanked by cross-stones, above which the stoning of St. Stephen the Proto-Deacon is shown: the Proto-Martyr is in the centre of the composition, in a kneeling position, with a thurible in his right hand. At the upper left corner, the Holy Trinity is depicted: Christ with the Cross, the Holy Spirit incarnated as a dove, and God the Father holding the globe in His left hand and blessing the martyr with His right hand. At the upper right corner, an angel is giving the halo to St. Stephen.

A high relief engraved at the top of the pediment, below the cornice, shows an eagle with outstretched wings as holding a lamb in its claws. There is a rosette on either side of this relief.

Above the horizontal ornamental band of the northern facade, the lateral windows of the pastophoria open, the eastern one being accentuated through a frame of stalactites. The central window, which is cruciform, is enclosed within an ornate rectangular frame. There is a cross above this window, around which two leopards, a bull-calf and a bird are depicted. The central part of the pediment is adorned with a scene of the



Հիսիսային ճակատում՝ հորիզոնական զարդագոտուց վեր, աւանդատների կողային լուսամուտներն են, որոնցից արեւելեանը շէտուած է շղթաքարէ շրջանակով: Կենտրոնական լուսամուտը խաչաձեւ է՝ առնուած զարդաքանդակ ուղղանկիւն շրջանակի մէջ, լուսամուտի շուրջը քանդակուած են երկու յովազ, արջառ եւ թռչուն, իսկ վերեւում՝ խաչաքանդակ: Դակտոնի կենտրոնում Յարութեան պատկերաքանդակն է՝ մէջտեղում յարութիւն առած Յիսուս Քրիստոսը, ներքեւում՝ երկու վախեցած զինուորներ, մէկի ձեռքին՝ կեռ թուր, միւսինը՝ նիզակ: Վերեւի երեք գեղազարդ վարդեակներից բարձր՝ ճակտոնի գագաթին, արծի բարձրաքանդակն է, երկու կողմերում՝ մէկական հրեշտակ, իսկ վերեւում՝ վարդեակ:

Եկեղեցին աւարտում է համալիրի զարդը կազմող 16 նիստանի գմբէթով, որն ունի քանդակազարդ թմբուկ եւ հովհարաձեւ վեղար: Թմբուկի պատերին մէկընդմէջ բացուած է կամարակապ ութ լուսամուտ: Նիստերի անկիւններում գալարահիւս սիւներն աւարտում են երկգլխանի վիշապներով, որոնցից վեր սկսում է հիւսածոյ սլաքաձեւ կամարաշարը: Կամարների միջեւ՝ նիստերի անկիւններում, վեցբեւեան սերովբէներն են: Բոլոր նիստերին՝ լուսամուտից վեր, սրբերի քանդակներն են՝ ներառուած ուղղանկիւն շրջանակների մէջ, իսկ դրանցից վեր քանդակուած են վարդեակներ: Արեւմտեան լուսամուտից վեր պատկերուած է երկնային գահին բազմած Յիսուս Քրիստոսը, որն աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախով բռնել է երկրագունդը: Ներքեւում չորս աւետարանիչների խորհրդանշներն են՝ արծի, առիծի, եզան եւ մարդու տեսքով: Իւրաքանչիւր նիստի ճակ-

Resurrection: Jesus Christ is in the centre of the composition, as having already risen from the dead. Below Him, there are two scared soldiers, one of them holding a hooked sword, and the other a spear. At the top of the pediment, above three upper ornate rosettes, a high relief shows an eagle flanked by two angels. There is another rosette above the eagle.

The church of St. Stephen is surmounted by a dioc-tahedral dome which is the pearl of the entire monastic complex. The ornate tambour has 8 arched windows opening from every second facet. The twisted pillars standing at the angles of the tambour facets end in double-headed dragons above which, a woven sagittal arcature starts. Between every two blind arches, the angles of the facets are adorned with six-winged seraphs. The facets above the windows are embellished with sculptural representations of saints enclosed within rectangular frames; above them, some rosettes are engraved. Above the western window of the tambour, Jesus Christ is depicted as sitting on the Heavenly Throne: He is holding the globe in His left hand, His right hand being engraved in a blessing gesture. Beneath Him, the symbols of the four Evangelists (an eagle, a lion, an ox and a human being) can be seen. The pediment of every tambour facet bears a cross-stone with rosettes on both its sides; in addition, there are some bird reliefs above them. The central parts of the facets are embellished with free-standing crosses. The dome is surmounted by a fan-shaped spire the spouts of which are shaped like animal heads. There are sculptural representations of animals at the four corners of the tambour, on the gable roof.




տոնին մէկական խաչքար է, կողքերին՝ վարդեակներ, վերելում՝ թռչնաքանդակներ: Թմբուկն աւարտում է հովհարածեւ վեղարով, որի ջրյորդանները կենդանիների գլուխներ են, իսկ նիստերի կենտրոններում կանգնեցած են ծառային խաչեր: Թմբուկի չորս անկիւններում՝ տումբաների երկթեք տանիքներին, կան կենդանիների քանդակներ:

Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցի. վեց գոյգ որմնասիւներով միանաւ եկեղեցին զետեղւած է Սբ. Ստեփանոս եկեղեցու եւ հիւսիսային պարսպի միջեւ: Հարաւային զանգակատան սիմետրիկ հիւսիսային պատի կենտրոնական հատւածում կցակառուցել են չորս հաստ որմնասիւններ, որոնք անաւարտ մնացած հիւսիսային զանգակատան առաջին յարկի սիւններն են: Հետագայում հիւսիսային ճակատի ողջ երկարութեամբ Սբ. Ստեփանոս եկեղեցու եւ հիւսիսային պարսպապատի միջեւ՝ կենտրոնական հաստ որմնասիւնների երկու կողմում, աւելացւել են աւելի փոքր որմնասիւններ, որոնցով ստեղծւել է սիմասրահ՝ բաղկացած խաչող թաղերով ծածկւած հինգ քառակուսի հատւածներից: Աւելի ուշ սիմասրահի արեւմտեան եւ արեւելեան կողմերից պատեր աւելացնելով եւ արեւելեան քառակուսի հատւածում բեմ կառուցելով՝ այն վերածւել է եկեղեցու: Այսօր, սակայն, այդ յաւելումների մնացորդներն են պահպանւել:

The church of Sts. Peter and Paul stands in the area between St. Stephen and the northern walls of the monastery. A uni-nave church of six pairs of pilasters, it was originally built as a portico attached to St. Stephen Church. The point is that in the 17th century, four thick pilasters were erected in the centre of the northern wall of this church for the construction of a new belfry planned to be symmetric to the existing (southern) one. However, the northern belfry was left incomplete, and later its unfinished first floor was made into a portico through the addition of smaller pilasters along the northern facade of St. Stephen Church, as a rhythmic continuation of the existing central ones. The portico comprised five square sections surmounted by intersecting vaults. Later walls were added to it from the west and east, and a bema was built in its eastern square section, the portico turning into a church in this way. At present only some remnants of these walls are preserved.

The three-floor belfry of the monastery adjoins St. Stephen Church from the south. It has sagittal arches and two intersecting vaults on its first floor. A horizontal band of woven ornaments goes around two pillars and two pilasters which are connected with these sagit-



Չանգակատուն. եռայարկ կառույցը Սբ. Ստեփանոս եկեղեցուն կից է հարաւից: Առաջին յարկը բաղկացած է երկու սիւները եւ երկու որմնասիւններն իրար միացնող սլաքաձեւ կամարներից, որոնցից վեր ծածկւած է խաչող թաղով: Սիւներն ու որմնասիւնները շրջանցում են եկեղեցու հորիզոնական հիւսածոյ զարդագօտին: Խոյակներն ունեն շքաքարային մշակում: Արեւմտեան ճակատին երկու խաչքար է ագուցւած: Երկրորդ յարկը մնան է առաջինին, միայն այն տարբերութեամբ, որ առաստաղի փոխարէն առագաստներով իրականացւած է անցում դեպի զանգակատան ռոտոնդայի կլոր բացւածքը, իսկ ճակատներն էլ աւարտում են մեղմ թեքութեամբ ճակտոններով: Խոյակները զարդարւած են երկրաչափական նախշերով: Հարաւային ճակատում կայ երկու խաչքար: Ռոտոնդայի ութ կլոր սիւների խաբիսիւներն ունեն քառակուսի հիմք, իսկ խոյակները վեցանիստ են: Կամարները նստում են խոյակներին՝ ստեղծելով զանգակատան ութանիստ թմբուկը, որն աւարտում է ութանիստ բրգաձեւ վեղարով: Կամարները միացած են զանգակատան կայունութիւնն ապահովող երկաթէ ձողերով: Ռոտոնդայի թմբուկին քանդակւած են վարդեակներ եւ հրեշտակներ:

tal arches. The capitals of the pillars and pilasters are adorned with stalactites. The western facade of this floor bears two cross-stones.

The second floor of the belfry resembles the first one with the difference that the transition to the circular opening of the rotunda is carried out by some pendentives instead of the ceiling; besides, the facades have pediments of loose slope. The capitals of the pillars and pilasters are decorated with geometrical patterns. The southern facade of this floor is embellished with two cross-stones. The eight round pillars of the rotunda have square bases and hexahedral capitals on which the arches rest, thus creating an octahedral tambour. It is adorned with rosettes and angels and ends in a similarly octahedral spire which is shaped like a pyramid. The arches are connected with iron bars which ensure the durability of the belfry.

Outbuildings. A two-floor outbuilding standing close to the monastic walls, east of St. Stephen Church, contains five vaulted rectangular rooms on the first floor, and a large hall of a ceiling of wooden logs on the second. Another, single-floor rectangular room is built inside a tower located north-west of the church, and two double-floor rectangular rooms are situated close to the south-western tower of the walls.

Եկեղեցական բակի օժանդակ կառույցներ. Սբ. Ստեփանոս եկեղեցուց արեւելք՝ պարսպին կից, միաշար երկյարկ սենեակներ են: Առաջին յարկում գետեղած է ուղղանկյուն, թաղակապ հինգ սենեակ, իսկ երկրորդ յարկում կառուցւած է գերանածածկ առաստաղով մեծ սրահ: Եկեղեցուց հիւսիս-արեւմուտք՝ աշտարակի մէջ, գետեղւած է միայարկ ուղղանկյուն սենեակ, իսկ հարաւարեւմտեան աշտարակին կից է ուղղանկյուն երկյարկ երկու սենեակ: Բակի հիւսիսային պարսպի արեւելեան կէտում բացւած է վանքի օժանդակ մուտքը:

Վանական համալիրի գլխաւոր մուտքը բացւած է արեւմտեան պարսպի կենտրոնում՝ շուրջ 8 մ ներս ընկած հատւածում, որն իր սրբատաշ շարածքով տարբերւում է կոպտատաշ շարածքով պարիսպներից: Աւարտում է սլաքածել կամարով: Բարաւորին քանդակւած է Մարիամ Աստուածածինը՝ մանուկ Յիսուսը գրկին: Դարպասը բացւում է դէպի եռամաս նախասրահ, որի հարաւային մուտքը տանում է միաբանութեան խցերի, հիւսիսայինը՝ եկեղեցական բակ, իսկ դարպասի դիմացից սկսող աստիճանները՝ դէպի արեւելեան կողմի տնտեսական բաժին:

Տնտեսական բաժնի առաջին յարկում թաղածածկ մառաններն ու ախոռն են: Երկրորդ յարկում՝ միջանցքի երկու կողմերում, մառաններն են, որոնցից արեւելք քառասին խոհանոցն է՝ չորս սիւների վրայ նստած գմբէթածել ծածկի երդիկով, մեծ եւ փոքր մի քանի որմնախորշերով, երեք թոնիրով: Հարաւից ունեցել է սեղանատուն տանող առանձին մուտք, որն այժմ փակւած է:

Հարաւային միաբանական բակը պարիսպների մէջ ամփոփւած հարաւային հատւածն է: Ներքին բակը երեք կողմերից շրջապատւած է սրահներով եւ միաբանութեան խցերով: Սրահները զբաղեցնում են ներքին բակի արեւելեան կողմը եւ հարաւարեւելեան կէտը, իսկ միաբանութեան խցերը՝ արեւմտեան կողմը եւ հարաւարեւմտեան կէտը: Սրահների առաջին յարկը բուն կառույցից առաջ է ընկած եւ տեղանքի թեքութեան պատճառով կիսագետնափոր է: Բաղկացած է իրար մէջ բացող 6 անկանոն սենեակներից եւ նրանցից հիւսիս գտնող սեղանատնից, որն ունի փոքր նախամուտք եւ թաղածածկ, երկար սրահ: Երկրորդ յարկը կից է պարիսպներին եւ բաղկացած է կանոնաւոր սենեակներից: Առաջին յարկի առաջ եկած սենեակների հարթ տանիքը երկրորդ յարկի սենեակների համար ծառայում է որպէս հարթակ: Սեղանատան վրայ՝ երկրորդ յարկում, կառուցւած է ուղղանկյուն երկու սենեակ: Դրանք հաւանաբար եղել են վանահօր բնակարանը:

Երրորդ յարկում՝ արեւելեան պարսպի երկայնքով ձգւում է սլաքածել կամարներով, աղիւսաշէն թաղով ծածկւած դահլիճ-սրահը, իսկ հարաւային

The main entrance to the monastery opens from the central part of its western walls, in a section that falls inward for about 8 metres, and ends in an arrow-shaped arch. The gateway is laid with finely-dressed stones, its tympanum being adorned with a relief of St. Mary holding infant Jesus in Her arms. The gate opens into a hall which gives access to three sections of the monastery: the southern courtyard around which some halls and cells are built; the northern church yard, and the part upwards, to the east (reached via some steps built in front of the gateway) where a two-floor household building is situated. The first floor of this building comprises some vaulted cellars and a stable. Its second floor has a straight corridor on both sides of which, some more cellars are built, with a kitchen east of them. The kitchen ceiling has an opening (called yerdik in Armenian) which is outwardly covered by a dome-shaped structure resting on four pillars. The kitchen also has several large and small niches and three tonirs (traditional underground ovens made of clay). To the south, it used to have an entrance leading to a refectory: now it is closed.

The southern courtyard is surrounded by halls and cells from three sides: the former are located in the east and south-east, and the latter in the west and south-west. The first floor of the halls extends out of the main building, being actually half-subterranean due to the slanting terrain. It comprises a refectory located to the north and 6 irregular rooms opening into one another. The refectory which has a small vestibule is a long vaulted hall.

The second floor, which is next to the walls, comprises some rectangular rooms two of which, located above the refectory, probably served as the Prior's dwelling. The flat roof of the first floor which extends out of the main building serves as a terrace for the second-floor rooms.

The third floor which is built along the eastern walls comprises a hall of sagittal arches and a brick vault as well as another, smaller hall (close to the southern walls) which is rectangular and has an open vestibule. The second and third floors are connected with steps built in the space between this open vestibule and the hall proper, near the south-eastern tower. The third floor used to have a wooden balcony running the full width of the open vestibule, along the smaller hall. The northern facade of the halls of the second and third floors is adorned with the large, arrow-shaped opening of the entrance. The rectangular windows of the second floor and the sagittal ones of the third storey open from the same facade.

A number of two-floor rooms built in a row form the continuation of the southern wing of the smaller hall and continue to join the western wing of a two-

պարսպին կից՝ բաց նախամուտքով ուղղանկյուն փոքր սրահը: Բաց նախամուտքի եւ դահլիճ-սրահի միջեւ՝ հարաւարեւելեան աշտարակին կից, երկու յարկերը միացնող աստիճաններն են: Դահլիճ-սրահի ողջ երկայնքով եւ բաց նախամուտքի լայնութեամբ երրորդ յարկի փայտաշէն պատշգամբն էր, որն այժմ չի պահպանւել: Երկրորդ եւ երրորդ յարկերի սրահների հիւսիսային ճակատը մշակւած է նախամուտքի սլաքածէ մեծ բացւածքով եւ լուսամուտների երեք շարքով: Երկրորդ յարկի լուսամուտներն ուղղանկյուն են, իսկ երրորդ յարկինը՝ սլաքածէ:

Սրահի հարավային թեւի շարունակութիւնն են կազմում միաշարք երկյարկ սենեակները, որոնք էլ միանում են միաբանութեան՝ նոյնպէս երկյարկ խցերի արեւմտեան թեւին: Առաջին յարկում՝ արեւմտեան պարսպին կից, կան ութ միաշափ խցեր, որոնք երկար միջանցքով բաժանւած են դէպի բակ մայող հինգ խցերից: Երկար միջանցքը բակին է միանում կենտրոնից եւ եզրերից կարճ անցուղիների միջոցով:

Առաջին յարկի խցերը քարաշէն են, թաղածածկ, ունեն մէկական փոքր լուսամուտ եւ որմնախորշեր: Սւադած են գաջով, տեղ-տեղ նշմարւում են որմնակարի հետքեր: Երկու յարկերն իրար միանում են հիւսիսային աշտարակին կից աստիճաններով: Աշտարակի մէջ կայ խուց, որի պատերի սուղի մի մասը դեռեւս պահպանւում է: Երկրորդ յարկի սենեակները տարբեր ժամանակաշրջանների կառույցներ են: Այս յարկի կառույցները հիմնականում հարթ գերանածածկ են: Հարաւում՝ մեծ սենեակի կողքերին, փոքր սենեակներ են, որոնց հիւսիսում ընդհանուր փայտէ պատշգամբով կան զոյգ սենեակներ: Սրանցից էլ հիւսիս՝ վանքի գլխաւոր մուտքի վերելում, առանձին սենեակ է:

Պարսպապատը շրջափակւում է վանքն ամբողջութեամբ: Անկիւններում հզօրացւած է կլոր աշտարակներով: Եկեղեցական բակի հիւսիսային եւ արեւմտեան պատերն ամրացւած է երկուսական կիսակլոր որմնահեծով: Արեւմտեան պատն ունի դէպի դուրս մայող չորս հրակնատ: Այս հատւածի հիւսիսարեւմտեան եւ հարաւարեւմտեան աշտարակները միացւած են ստորգետնեայ թաղակապ միջանցքով, որն օգտագործւել է որպէս թաքստոց: Լուսամուտները բացւած են հիմնականում աշտարակներում եւ արեւմտեան պարսպապատին:

Աղբիւր. մենաստանից փոքր-ինչ հեռու՝ քարափի տակից, յորդ աղբիւր է բխում, որը խողովակներով հասնում է վանք:

floor structure containing some cells. The first floor, which is built close to the western walls, comprises eight cells of the same dimensions, a long corridor separating them from another five cells overlooking the courtyard. The corridor has special passages in its central and lateral parts connecting it with the courtyard.

The first-floor cells are built of stone, each of them having a small window and a niche. Inwardly, they are vaulted and coated with drywall, some fresco remnants being preserved here and there. The two floors are connected with steps built close to the northern tower; this tower contains a cell where plaster is still partly preserved. The second-floor cells were built in different times: they mostly have flat roofs and ceilings of wooden beams. To the south, there is a large cell flanked by some smaller ones; besides, there are two more cells, connected with a common balcony of wood, to the north. Farther northward, another cell is built above the main entrance to the monastery.

The walls which enclose the entire monastic complex are fortified by round angular towers. Each of the northern and western walls of the church yard is consolidated by two semi-round counterforts, the western wall also having four embrasures. The north-western and south-western towers of this section are connected with an underground vaulted corridor which used to serve as a hiding-place. The windows mainly open from the western walls and towers.

Fountain. An abundant fountain runs from beneath a rock not very far from the monastery: it receives water through a pipeline.

ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻ ԱՐԴԵՐՈՐԻ (ՀՈՎԻ) ԵԿԵՂԵՑԻ

Տեղագրություն. գտնուում է երեք կողմից ժայռերի մեջ ամփոփված քեք լանջի վրայ՝ Հին Ջուղա քաղաքատեղիի իրանական հատվածում՝ Արաքսի աջ ափին՝ Իրանի ԻՀ Արեւելեան Ատրպատական նահանգի Ջուլֆա քաղաքից 6 կմ հիւսիս-արեւմուտք: Զաղաքատեղին հիմնականում տարածուում է Արաքսի ձախ ափին՝ Նախիջեւանի տարածքում:

Անուան ստուգաբանությունը. Անդրեորդի (Հովի) եկեղեցու անուան ստուգաբանությունը պարզելու համար անդրադառնանք Արեւմտեան Հայաստանի Բերկրի գաւառի Յուսկանորդի Սբ. Ստեփանոս վանքի անուան ծագմանը: Հայր Ներսէս Սարգիսեանը գրում է. «... շինեալ է մեմաստանս յանուն սրբոյն Ստեփաննոսի որդոյ տեառն Յուսկան, որ էր յԱրտամետոյ, որպէս պատմեն Յայսմաւորք: Յեկեղեցոյ է գերեզման նորին սրբոյն Ստեփաննոսի պատուել մեծապէս յովստաւորաց...»:

1541 թ. ստեղծւած մի Աւետարանում նշել է. «Գրեցաւ... Անապատիս Տէր Յուսկայ որդոյ, ի գաւառիս Տարբերունեաց, որ այժմ կոչի Բերկրի»:

17-րդ դարի մատենագիր Դաւիթ Բաղիշեցին Բերկրիի Յուսկանորդի վանքի մասին վկայել է. «...յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ եւ առաքինութեամբ սուրբն Ստեփաննոս վարդապետ, որդի Յուսկայ քահանայի՝ ի կողմանս Բերկրու եւ Վասպուրականի...»: Այս տեղեկութիւններից պարզ է դառնում, որ վանքը նիւրաւ է տէր Յուսկայ քահանայի որդուն՝ Սբ. Ստեփաննոսին, զոր համար էլ կոչուում է Յուսկանորդի Սբ. Ստեփանոս: Սրանից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ Ջուղայի Անդրեորդի եկեղեցու անուանումը կապւած է ոմն Անդրէի որդու հետ: Իսկ Հովի եկեղեցի անուան տարբերակը կա՛մ ժողովրդական է, կա՛մ կապւած է Անիից գաղթած Հովիւեան տոհմի հետ (ինչպէս, օրինակ, Անիի Հովի եկեղեցին հավանաբար եղել է անեցի Հովիւեան տոհմի եկեղեցին):

Ղ. Ալիշանը (1820-1901) «Միսական» աշխատութեան մէջ Անդրեորդու մասին հակասական տեղեկութիւններ է փոխանցում. «... Ամենափրկիչ, որ եւ վանք կոչի արտաքոյ շինին ի բարձու քարաբլրի. Ս. Գէորգ, Ս. Աստուածածին՝ Վերին կաթան կոչեցեալ ի շինամիջին, եւ արտաքոյ պարսպացն՝ միւս եւս Ս. Աստուածածին եկեղեցի. Ֆրանկի եկեղեցի, որպէս թուի Միաբանողացն Հայոց, որոց էր միւս եւս

CHURCH OF ANDREORDI, OLD JUGHA VILLAGE SITE HOVVI CHURCH

Location. The church of Andreordi, which is also known by the name of Hovvi, is situated on a slanting mountain slope surrounded with rocks from three sides, on the right bank of the river Arax, 6 km north-west of the city of Jolfa, East Azerbaijan Province, Islamic Republic of Iran. The church stands in the Iranian part of the town site of Old Jugha, which mostly extends on the left bank of the Arax, on the territory of the historical Armenian region of Nakhijevan (within the Republic of Azerbaijan).

Name Etymology. As translated from Armenian, the name *Andreordi* means *Andre's son*, which shows that the church was probably built in memory of a certain Andre's son. Similarly, there is an Armenian monastery in Berkri District, Western Armenia, which is named *Huskanordi Sourb* (St.) Stepanos, suggesting that it is dedicated to Husik's son Stepanos. In this respect, Nerses Sargissian, a member of the Armenian Catholic Mekhitarist Congregation, writes the following: "The monastery is dedicated to St. Stepanos, Father Husik's son, who was from Artamet, as attested by the *Aysmavurk* [a compilation of hagiographies analogous to the Greek Synaxarion]. St. Stepanos is buried in the [monastic] church, his grave being venerated by pilgrims."

A Gospel of 1541 states the following: "Written... in the monastery of Father Husik's son, in the district of Tarberunik that is now called Berkri."

According to Davit Baghishetsy, a 17th-century Armenian historian, "in those times, the holy archimandrite Stepanos, Priest Husik's son, was distinguished for his wisdom and righteousness throughout Berkri and Vaspurakan."

As for the name *Hovvi* mentioned above, it was mostly used by common people, being probably connected with the Hovivians, an Armenian family from Ani, the capital of the medieval Armenian kingdom of the Bagratids (this city had a church called Hovvi which was presumably associated with the same family).

The prominent Armenian historian Ghevond Alishan (1820 to 1901) mentions the church of Andreordi among the churches and monasteries of Old Jugha in his work entitled *Sisakan* (in Armenian): "Amenaprkich [Holy Saviour] Monastery that is on a high rocky hill outside the town; St. Gevorg [George];



նովին անուամբ (Ֆրանկաց) եկեղեցի արտաքոյ շինին, եւ յայն կողմն Երասխայ», նաեւ. «Ի միջի աներակաց Ջուղայ երեւին եւ տեղիք Ս. Գեորգ եւ Ֆրանկի եկեղեցեաց. յայս անուն, (որ նշանակէ զեկեղեցի կաթողիկ կամ Միաբանող Հայոց), կայ եւ այլ եկեղեցի յայն կողմն (ի հարավոյ) Երասխայ, սրածայր կաթողիկէի, վասն որոյ Պոմբլօզ կամ Պօլօզ կոչի, մերձ ի կիսեղծ Կարաւանատունն շինեալ ի Խօջայ Նազարէ. որոյ հանդէպ ի հիւսիսակողմն կայ զոյգ նորին, երկոքին եւս սրբատաշ քարամբք»:

Այժմ չունենք հաւաստի տեղեկութիւններ, որ փաստենք Ալիշանի նկարագրութեամբ եկեղեցու՝ հայ կաթողիկէ լինելը: Իսկ ինչ վերաբերում է նրա կողմից Պոմբլօզ կոչւելուն, ապա շփոթմունք է եղել Արաքսի ձախ ափին՝ Անդրեորդու հանդիպակաց լանջին եղած քաղաքատեղիի տարածքում Պոմբլօզի եկեղեցու հետ, որը հիմնովին ոչնչացւել է 2002 թ. Նախիջեւանի ադրբեջանական իշխանութիւնների կողմից:

Պատմութիւն. եկեղեցու կառուցման ժամանակը յայտնի չէ: Ըստ Վ. Տեմիրճեանի կազմած Ատրպատականի հայկական եկեղեցիների ցուցակի՝ Անդրեորդին թագրւում է 13-րդ դարից ոչ շուտ:

Ելնելով եկեղեցու կառուցողական առանձնաչափութիւններից՝ այն երկշերտ է. մեծ քարերով կառուցւած սկզբնական ուղղանկիւն միանաւ եկե-

Sourb Astvatsatsin [St. Mary] that is also called Verin [Upper] Katan (within the town); another church called Sourb Astvatsatsin outside the town; a Catholic church [called Pombloz]..., and another Catholic church [Andreordi] that is outside the town, on the other side of the [river] Yeraskh [Arax].”

In another part of the same work, Alishan also writes the following: “In the ruins of [Old] Jugha, the sites of St. Gevorg and the Catholic church [of Pombloz can be seen].... There is another [Catholic] church of the same name on the other [right] side of the Yeraskh: it has a pointed dome due to which, it is called Pombloz or Poloz [pombloz or poloz is an Armenian dialectal word meaning pointed or dome-shaped]. A semi-ruined caravanserai once built by khoja [merchant] Nazar is situated nearby, another, similar caravanserai being located opposite it, on the northern [left] side [of the river]. Both of them are built of finely-dressed stone.”

So, Alishan mentions the church of Andreordi as a Catholic one, but the available historical records do not provide any information to substantiate this. As for naming it Pombloz, the historian actually confuses it with another church which used to be located on the left bank of the river Arax, just opposite the church of Andreordi, in the Azerbaijanian part of Old Jugha (it was totally annihilated by the authorities of this country in 2002).



ղեցին աներելուց յետոյ՝ հաւանաբար 15-16-րդ դարերում, փոքր քարերով եւ աղիւսով շարած անկիւնային յաւելումների՝ հզօր որմնասիւնների միջոցով վերածել է խաչածէ գմբէթաւոր եկեղեցու:

Նրանից հիւսիս՝ քեք լանջին, եղել է գերեզմանոց, որտեղ 1960-70-ական թականներին պահպանում էր արձանագիր երեք խաչքար: Դրանք տեղափոխւել են Թաւրիզի Սբ. Աստուածածին եկեղեցու բակ:

Անդրէորդին նորոգւել է 1997-1998 թթ. Իրանի մշակութային ժառանգութեան պահպանման կազմակերպութեան եւ հայ համայնքի միջոցներով:

2005-2006 թթ.՝ Հին Ջուղայի գերեզմանոցի ոչնչացումից յետոյ, Նախիջեւանի աղբրեջանական իշխանութիւններն աներում են մաւ եւ քաղաքատեղիի մաս կազմող, բայց այլ պետութեան տարածքում գտնուող Անդրէորդի եկեղեցին: 2007 թ. եկեղեցին կրկին նորոգւում է իրանցի մասնագէտների կողմից Իրանի ԻՀ իշխանութիւնների օժանդակութեամբ, սակայն նորոգումը կատարւում է առանց գիտական հիմնաւորման՝ պատմական յուշարձանների վերականգնման սկզբունքների խախտումներով:

2008 թ. Իրանի մշակութային ժառանգութեան նախարարութեան կողմից վանական համալիրը Սբ. Ստեփանոս Նախավկայ վանքի հետ ներկայացւում է ԻԻՆԵՍԿՕ-ին եւ գրանցւում Համաշխարհային ժառանգութեան ցանկում:

2012-13 թթ. ճարտարապետներ Սամուէլ Այւազեանը եւ Աշոտ Յակոբեանը, համագործակցելով ԻԻՀ Մշակութային ժառանգութեան կազմակերպութեանը կից Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի հետ, չափազորւմ են եկեղեցին եւ մշակում վերականգնման նախագիծը, որի հիման


History. The time of the construction of the church of Andreordi remains obscure. According to a list of Armenian churches of Atrpatakan (Azerbaijan) Province made up by Temirjian, it was erected not earlier than the 13th century. Actually, the church shows two different layers of masonry: the original large blocks of stone with which a uni-nave rectangular church was built, and later additions (probably made in the 15th to 16th centuries) of small stones and brick which turned it into a domed cruciform structure.

A cemetery once extending on a slanting hillside north of the church still preserved three inscribed cross-stones between the 1960s and 1970s: now they are kept in the yard of Sourb Astvatsatsin (St. Mary) Church of Tabriz, Iran.

From 1997 until 1998, the church of Andreordi underwent renovation with financial means allocated by the Iranian Cultural Heritage Organization and the local Armenian community. However, in 2005 to 2006, after the annihilation of the Armenian cemetery of Old Jugha, located in Nakhijevan, on the left bank of the Arax, the Azerbaijanian authorities also destroyed this church which is part of Old Jugha, but stands on the territory of Iran. In 2007 the church was restored by Iranian specialists, with the support of the Iranian authorities. It should be noted, however, that the work was carried out without any scientific substantiation, with some violations of the general principles of historical monuments restoration.

In 2008 the church was included on UNESCO's World Heritage List, having been nominated by Iran's Ministry of Cultural Heritage, Handicrafts and Tourism.

From 2012 to 2013, the Base of Historical Churches of Iran started the restoration of the church in collaboration with two architects invited from the Republic of




վրայ էլ 2014-15 թականներին այն ամբողջովին վերականգնում է:

Ճարտարապետություն. Ի սկզբանե եղել է մեծ քարերով կառուցված ուղղանկյուն միանավ եկեղեցի, որն ատերևոյց յետոյ՝ հաւանաբար 15-16-րդ դարերում՝ Ջուղայի ծաղկման շրջանում, լրացւել է փոքր քարերի եւ մասամբ աղիւսի շարածք ունեցող նոր շէրտով: Կատարւել է նաեւ յօրինվածքային ձեւափոխութիւն. արեւմտեան անկիւնային որմնասիւնների յաւելումներով վերածւել է փոքր խաչածէ գմբէթատր եկեղեցու: Գմբէթը հասգչում է այդ երկու որմնասիւնների եւ խորանի անկիւններին յենւած կամարների վրայ: Բարձր բեմով կիսաշրջան խորանի երկու կողմերում շեղ առանցքով նեղ գաղտնարաններ են, որոնց քողարկւած մուտքերը բացւել են խորանի հիւսիսային եւ հարաւային խորշերի ետին պատերից: Հիւսիսային պատի մէջ բացւած է կամարակապ խորշ: Կամարների եւ թաղերի վրայ յենւած, ներքուստ եւ արտաքուստ կլոր թմբուկով գմբէթը պսակւած է կոնածէ սրածայր վեղարով: Եկեղեցին լուսաւորում է երեք ճակատներից բացւած մէկական նեղ եւ գմբէթի չորս լուսամուտներով: Բացառութիւն է կազմում արեւելեան ճակատը, որը զարմանալիօրէն լուսամուտ չունի: Միակ մուտքը բացւած է արեւմտեան ճակատի կենտրոնական մասում:

Հարաւից եւ արեւելքից կցւել է պարսպապատ, որն ընդգրկելով մեծ մակերես՝ եկեղեցին ներառել է հիւսիսից օժանդակ շինութիւններով կցակառուցւած պարսպապատ համալիրի մէջ, ինչը ենթադրել է տալիս, որ այն վերածւել է փոքրիկ վանական համալիրի:

Ներկայումս օժանդակ շինութիւններից պահպանւել են միայն ստորին շարքերը:



Armenia, Samvel Ayvazian and Ashot Hakobian. After measurement, a restoration project was worked out, and the church underwent complete restoration from 2014 until 2015.

Architectural Description. The church of Andreordi was originally built of large blocks of stone as a unisave rectangular structure. Later—probably, between the 15th and 16th centuries, when Old Jugha boasted prosperity—some additions were made to it with small stones and partly with brick. The church also underwent some composition change, turning into a domed cruciform building through the erection of two mighty pilasters in its western corners. These pilasters are connected by the dome-bearing arches which also link them with the corners of the altar. There is a narrow cache of an oblique axe on either side of the semi-circular altar: their secret entrances used to open from the back walls of the northern and southern niches of the altar which has an elevated bema. There is an arched recess in the northern wall of the church. The tambour is round both inwardly and outwardly. The dome which rests on arches and vaults has four windows and is surmounted by a pointed conical spire. Each of the three facades of the church has a narrow window (surprising as it is, there is none in the eastern façade). The only entrance to the church opens from the central part of its western facade.

In the course of time, the church was enclosed within walls from the south and east. Later these walls were extended to encompass some outhouses built to the north so that we can suppose that a small monastic complex was probably established around the church of Andreordi. At present only the lower stonework of the outhouses is preserved.

ԴԱՐԱՇԱՄԲ ԳԻՒՂԱՑԵՂԻ

Տեղադրություն. գտնուում է Իրանի ԻՀ Արեւելեան Ատրպատական նահանգի Ջուլֆա քաղաքից 15 կմ հիւսիս-արեւմուտք՝ Սբ. Ստեփանոս Նախավկայ վանքից 2,3 կմ հիւսիս-արեւմուտք՝ Արաքս եւ Տըղմուտ (Աղչայ) գետերի միախառնման վայրում՝ Արաքսի աջ ափից մօտ 150 մետր վեր՝ թեք լանջի վրայ (Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գաւառ):

Անուանում. Դարաշամբ պարսկերէնից թարգմանաբար նշանակում է Եղեգնաձոր: Յիշատակում է նաեւ Բաշքեանդ, Բաշքենդ, Շամբ, Շամբաձոր եւ Շամբիձոր անուանումներով:

Պատմություն. առաջին յիշատակութիւնները վերաբերում են 976 թ., երբ հայոց Բագրատունի թագաւոր Աշոտ Գ Ողորմածը Սբ. Ստեփանոս Նախավկայ վանքին է նւիրում Շամբի ջրաղացները:

1407 թ. շամբեցիները մեծապէս տուժում են երկրաշարժից եւ դրան յաջորդած համաճարակից:

Դարաշամբը եղել է կալածատիրական ճնշումներից ազատ գիւղական համայնք եւ իբրեւ սեփականութիւն՝ պատկանել գիւղացիներին, այսինքն՝ պետութեանը վճարել է հարկ, իսկ Սբ. Ստեփանոս Նախավկայ վանքին՝ տուրք:

1506 թ. գիւղը Բաշքեանդ անամբ յիշուում է պարսկերէն կալածագրում, երբ Իսմայիլ Ա շահի հրամանով երկրում հողերի եւ այլ եկամտաբեր միջոցների ընդհանուր հաշւառում էր անցկացւում:

Հաւանաբար 1604 թ. Շահ Աբասի բռնագաղթի հետեւանքով գիւղն ամայանում է: Հետագայում գաղթից խուսափած կամ Իրանի կենտրոնական գաւառներից հայրենի գիւղ տեղափոխւած շամբեցիները, հին ջրաղացիները եւ այլք հիմնում են մէկ այլ գիւղ, այս անգամ՝ Արաքսի ափին աւելի մօտ, այնտեղ, ուր Տղմուտը միախառնւում է Արաքսին:

1610 թ. յիշուում է Մաղարդավանքի միաբան, ծնունդով շամբեցի Ռստակէս (Արիստակէս) արքեպիսկոպոս (հետագայում՝ վարդապետ), որը 1628 թ. կառուցում է Դարաշամբի Սբ. Աստուածածին եկեղեցին:

1614 թ. ջերմախտի համաճարակին զոհ է գնում 250 բնակիչ:

1655 թ. Մաղարդավանքում, ի յիշատակ Շամբեցի Կիրակոսի որդու՝ Յովհաննէսի, ընդօրինակւում է մի Ժամագիրք:

1658 թ. Շահ Աբաս Բ-ի հրովարտակով Ատրպատականի իշխանութիւններին յանձնարարւում է պարզել Դարաշամբ, Օրթաքեանդ եւ Դիրքեանդ գիւղերի բնակիչների հարկերի նկատմամբ Սիր

DARASHAMB VILLAGE SITE

Location. The village site of Darashamb is located at the juncture of the rivers Arax and Tghmut (Agh-chay), about 150 metres upwards from the right bank of the former, 2.3 km north-west of the monastery of Sourb Stepanos Nakhavka (St. Stephen the Proto-Deacon), 15 km north-west of the city of Jolfa, East Azerbaijan Province, Islamic Republic of Iran (in the historical Armenian district of Artaz, Vaspurakan Province, Armenia Maior).

Name. *Darashamb* is translated from Persian as *Gorge of Canes*. The village has also been mentioned by the names of *Bashkyand*, *Bashkend*, *Shamb*, *Shambadzor* and *Shambidzor*.

History. One of the earliest records referring to Shamb dates back to 976: according to it, the Armenian Bagratid king Ashot III the Merciful donated some mills located in the village to the monastery of St. Stephen the Proto-Deacon.

In 1407 Shamb was struck by an earthquake, being later visited by a disastrous epidemic.

There were no private landowners in Darashamb: the land was owned by the local inhabitants who paid taxes only to the state and to the monastery of St. Stephen the Proto-Deacon.

A Persian deed of purchase made up in 1506 on Shah Ismayil I's order, to register all the lands and profit-yielding estates of the country, mentions Darashamb by the name of *Bashkyand*.

Darashamb was probably abandoned after the deportation of 1604 organised by Shah Abbas I. Later part of the local inhabitants who had escaped the deportation as well as some others who had moved back to their birthplace from the central districts of Iran established a new village at the juncture of the rivers Tghmut and Arax (closer to the bank of the latter). The founders of the new village also included some Armenians from Old Jugha.

A record of 1610 mentions coenobite Restakes (Aristakes) of the monastery of St. Stephen the Proto-Deacon who was from Darashamb by birth. In 1628 Aristakes, already an archimandrite, built Sourb Astvatsatsin (St. Mary) Church in his native village.

In 1614 Darashamb was visited by an epidemic of fever which killed 250 of its inhabitants.

In 1655 a *Book of Prayers* was copied in the monastery of St. Stephen the Proto-Deacon in memory of Hovhannes, the son of a certain Kirakos Shambetsy.

In a decree issued in 1658, Shah Abbas II ordered the authorities of the province of Azerbaijan to find out if

Սաֆի Գեչի յաւակնութիւնները եւ արգելել նրա անօրինականութիւնները:

1680 թ. Կոստանդ քահանան Շամբում ընդօրինակում է Յայսմատուրք, որի պատկրատուն՝ նախիջեւանցի Էլիքսանը, այն նւիրում է Ագուլիսի Սր. Թովմա Առաքեալի վանքին:

17-րդ դարի վերջին կամ 18-րդ դարի սկզբին դարաշամբցի 15 ընտանիք ստիպւած փոխադրւում է Նախիջեւանի Աստապատ գիւղ եւ բնակութիւն հաստատում, սակայն շահ Սուլթան Հուսէյնի՝ 1710 թ. հրովարտակով թոյլատրւում է նրանց վերադարձը հայրենի գիւղ:

18-րդ դարի երկրորդ կեսին՝ Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի օրօք (1763-1780), Շամբը վկայւած է որպէս Նախիջեւանի թեմին ենթակայ բնակավայր:

1817 թ. սեպտեմբերի վերջերին գերմանացի սպայ Մորից ֆոն Կոցեպուն Ջուղայից որոշ հեռաւորութեան վրայ՝ Արաքս գետի ափին, յիշատակում է Դարաշամբ գիւղը՝ որպէս աղքատիկ բնակավայր:

the taxes imposed on the villages of Darashamb, Ortakyand and Dibkyand by a certain Mir Safi Gech were legal or not. It was also stated that the provincial authorities should protect the local population against any pressure.

In 1680 Priest Kostand copied an *Aysmavurk* (a compilation of hagiographies analogous to the Greek Synaxarion) in Shamb: the client, a certain Eliksan from Nakhijevan, donated it to the monastery of Sourb Tovma Arakyal (St. Thomas the Apostle) located in Agulis Village of his native region.

Either in the late 17th or early 18th century, 15 families from Darashamb were forced to move to Astapat Village, Nakhijevan, but later they were allowed to return to their native village by a decree issued by Shah Sultan Husein in 1710.

In the second half of the 18th century, in the days of Catholicos Simeon Yerevantsy (1763 to 1780), Shamb belonged to the diocese of Nakhijevan.



1818-1819 թթ. Մաղարդավանքի առաջնորդ Սարգիս վարդապետին ուղղւած հրամանագրով վերահաստատւում է Դարաշամբ գիւղի՝ վանքապատկան նւիրատւական հողատարածք լինելը, եւ այն ազատւում է հարկերից:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից յետոյ դարաշամբցիների մի մասը վերաբնակւում է Նախիջեւանում, մի մասն էլ հաստատւում է ՀՀ Վալոյց ձորի Ազատեկ գիւղում:

Մաղարդավանքի 1831 թ. ընդարձակ արձանազրութեան մէջ, որը փորագրւած է եկեղեցու մուտ-

In late September 1817, Darashamb was visited by Moritz von Kotzebue, a German officer who mentions it as a poor village located within some distance of Old Jugha, on the bank of the river Arax.

Under a decree addressed to Archimandrite Sargis, Prior of Maghardavank (St. Stephen the Proto-Deacon) Monastery, either in 1818 or in 1819, the village of Darashamb was returned to the monastery as part of its estates: thanks to this, the locals were exempted from taxes.

After the Russo-Persian war of 1826 to 1828, part of the inhabitants of Darashamb took up residence in

քից հարաւ, խիստ ուշագրաւ տեղեկութիւններ կան գիւղի պատմութեան մասին: Պարզում է, որ 1831 թ.՝ պարսկահայոց մեծ գաղթից յետոյ, մենաստանի առաջնորդ Սարգիս Դաւթեանի պաշտօնավարութեան ժամանակ, Ջուղայի ոմն բնակիչ երեք հարիւր թումանով գնել է Շամբ գիւղը եւ զգուշացրել, որ ոչ ոք չվաճառի բնակավայրը, իսկ եկեղեցու մուտքի բարաւորի՝ դարձեալ 1831 թ. պարսկերէն արձանագրութեան մէջ նշած է, որ թագաժառանգ Աբաս-Միրզան Նախավկայի վանքին է նիւրել Շամբ գիւղը եւ խստօրէն կարգադրել չվաճառել այն, ինչպէս նաեւ արքայական հրովարտակով ազատել է գիւղն արքունի գանձող հարկից:

1842 թ. Շամբ գիւղն ուներ շուրջ 30 տուն հայ բնակիչ:

1909 թ. դեկտեմբերի 12-ին կազմած վաւերագրերից մէկից ակնյայտ է դառնում, որ քրդերի ասպատակութիւններից խուսափելով՝ դարաշամբցիներն ապաստան են գտնում Մաղարդավանքում:

1913 թ. բնակիչները սկսում են արտագաղթել Արեւելեան Հայաստան:

1914-1918 թթ. ընթացքում թուրքական բանակն ատերում է Դարաշամբը, եւ այն վերածում է անբնակ գիւղատեղիի: Միայն 1921 թ.՝ վիճակը փոքր-ինչ կայունանալուց յետոյ, դարաշամբցիների մի մասը, անսարկ թեմի առաջնորդի յորդորներին, համաձայնում է Դետոն վարդապետի հետ փոխադրել հայրենի գիւղ: Սակայն բնակավայրն իսպառ ատերած գտնելով՝ նրանք գերադասում են բնակութիւն հաստատել Նախավկայի վանքում: Մինչեւ 1948 թ. այնտեղ է մնում շուրջ 15 ընտանիք: 1957 թ. վանքում ապրում էր 7, իսկ 1959 թ.՝ 3 ընտանիք:

Դարաշամբ գիւղն ունեցել է երկու գերեզմանոց՝ վերին եւ ներքին թաղերի, որոնցում եղել է Սբ. Յովհաննէս անվամբ երկու մատուռ: Այժմ պահպանւել են միայն վերին թաղի գերեզմանոցի վերելում գտնող միանաւ, կիսաշրջան խորանով ուղղանկիւն մատուռի ատերակները՝ կից շինութիւնների հետքերով, ինչպէս նաեւ գրեթէ ամբողջութեամբ՝ մատուռի շուրջ եւ դէպի հիւսիս-արեւմուտք ձգող թեք լանջի գերեզմանոցը:

Nakhijevan, while some others moved to what is the present-day village of Azatek, Vayots Dzor Region, Republic of Armenia.

According to an extensive inscription of 1831 engraved south of the entrance to the church of Maghardavank Monastery, after the large-scale immigration of Persian Armenians to Eastern Armenia in 1831, in the days of Prior Sargis Davtian, one of the inhabitants of Jugha Village (in Nakhijevan) bought Shamb at three hundred tomans (Persian tomans) on condition that it should never be sold. Another inscription of the same year, engraved in Persian on the entrance tympanum of the monastic church, states that Prince Abbas Mirza donated Shamb to Maghardavank, strictly ordering not to sell it later. He also issued a decree exempting the village from taxes paid to the state.

